աշխարհի երկու սիրուն պահումանքներ, որք վայել չեւթեամբ կը փայլին, առանց թերժութեան եւ անդատգիւտ ուղղութեամբ։ Իր առ աջին տարւ-սորութիւնը պիտի ջնջուէր արդեօք . . . պիտի ան-հետանազ։ թէ, բնդ հակառակը, և ուստաել քաղ-ցըր ու եւս տուռել խոր պիտի գործէր ի սրտին։ Դրայ ասնող ու զին վեց տաքերը վեր երան ու ներ-իազ աւթին մեջ երկու մեծահասակ առնելոյներէ<sup>(1)</sup> ընդունուեցան, որք խիստ արժանաւոր ու խիստ պատկառել ի կերպարաններ ունեին։ Այս ներքնա-գաւիթը, ասենաք, բնդարձակ ունեակ մըն էր՝ սառ ու մերկ իր քարէ որմերուն մեջ՝ այս որմերն էիննա, սքանչելի օթոցներով ծածկուած էին որք գիշարանական նիւթեր կը ներկայացնէին։ Երեցը հազիւ թէ նայեցաւ այս օթոցներուն և այն ակ-նարդին հերիք եղաւ որ տեսնէ թէ այն դիցուհիք որ կը ճեմին կանաչներուն մեջ, նոսինազոյն պարզու-թեամբ հազ ու ստենք կը կըէին։

Ոտնելոյներուն մէ կը մեծ սրահին երկու գուռնե-րը բացաւ։ Հան էր որ կը կենաց ստվարաբար պա-ռաւ մարգիզուհին, բարձրացէն վառարանին ազ-կողմը նոսած, և ձախ կողմն ալ գրուած էր շա-գանակագոյն թիկնաթուը։ Ոչ եւս կար շագանա-կագոյն թիկնաթուը։ Էայսրութեան ասենէն, մը-նացած այս հին կարասին, որ սրահին կարգ ու-գրութեան հիմն եղած էր, անոր մեղք անցեր էր՝ սքանչելի սաղնեղորդեալ կարասիք մը՝ 18<sup>1</sup> զա-րուն վերջին մասին տարագովը։ Ասկա շատ մը սլող-աին թիկնաթուներ ու սլզտի՛ վուգաթուներ<sup>(2)</sup>,

(1) Valet de pied. (2) Pouf.

ամեն գոյնով և ամեն ձեւով, հաւաս հանուն նետ-  
մած էին այսպիսի անկարգ ու խառնացնելոր ե-  
րեւոթով՝ որ լրում էր արաւեստներ:

Տիկին Աքօթ, երէցին ու Ժանին ներս մահելը  
անսնելով, սորի ելու, և զէմերնին ելլարով:

— Ի՞նչ ազնիւ էք որ եկաք, աէր երէց, ըստ . . .  
դոք ալ, պարու . . . և արքան գոհ եմ ձեզ նորին  
տեսնելուս, ձեզ իմ առաջին, իմ միայն բարեկամ-  
ներս այս երկրին մէջ :

Ժան ողի առաւ. նոյն կինն էր միշտ:

— Իր ներքք ինձ, յարեց տիկին Աքօթ, ներկա-  
յացնել ձեզի իմ զանեներս . . . Հանոի և Պէլ-  
լը . . . եկէք :

Հանոի պզամիկ մանչ մըն էր, սիրուն համբո-  
րիկ, վեց տարեկան, և Պէլլա փաքրիկ աղջիկ մը,  
շատ աղորիկ, հինգ տարեկան. իրենց մօրը պէս  
խոշոր աւու աշքեր ունեին և անոր պէս ուկեզոծ  
մազեր :

Երէցն երկու տղաքը համբուրելն ետքը, Հան-  
ոի, որ սքանչականութ Ժանին համազգեսար կը գի-  
տէր, ըստ իր մօրը.

— Հասկա զինուորականը, մայրիկ, զինուորա-  
կանն ալ պիսի համբուրելո՞մ:

— Եթէ կ'ուզէք, պատասխանեց տիկին Աքօթ,  
և եթէ ինքը կը հաճի:

Ապարկեան մը չ'անցաւ՝ երկու տղաքն ալ Ժանին  
ծնկուրներուն վրայ անզաւորուեց էին և հարցու մ-  
ներավ կը կոծէին զիս:

— Սուայ էք :

— Ոյս, սուայ եմ:

- Ի՞նչի մէջ :
- Հրետառուց :
- Հրետառուք . . . թնդանօթ նետօղներն են . . .  
Ահ , որչափ կը զուարձանամ եթէ թնդանօթին  
նետութլը լսեմ եւ մօտը գտնուիմ :
- Կը տանիք մեզ , որ մը , երբ նետեն թնդանօ-  
թը . բաէք , կ'ուզէք տանիլ :

Այս միջոցին՝ տիկին Սքօթ՝ երէցին հետ կը խօ-  
սէր , եւ Ժան , աղոց հարցմանց պատասխանելով  
հանգերծ , տիկին Սքօթը կը դիմէր : Բեհեղեայ  
ձերմակ շրջազգեստ մը հազած էր , այլ բեհեզր  
կ'աներեւութանար՝ ժանեակներով ծալ ծալ ծո-  
պերու ձիւնակոյաբ մը ներքեւ : Շրջազգեստը կուրծ-  
քին վրայ քառակուսի ձեւով բաց էր լսնքովը :  
Թեւերը մերկ մինչեւ արմակը , կարմիր վարդերու  
մեծ կակ փունջ մը բաճկոնակին բացուած տեղը ,  
կարմիր վարդ մ'ալ մազերուն մէջ ընդելու զեալ ա-  
զամանեց է ձարձմանդով մը , այլ ինչ ո'չինչ :

Տիկին Սքօթ յանկարծ նկատեց որ Ժան զինուո-  
րականութեամբ զրացվեալ էր իր երկու աղացման :

— Ո՞հ , ո'րքան ներում կը խնդրեմ ձենէ պարոն :  
Համուի . Պէլլա . . . :

— Կ'աղաշեմ , տիկին , թողէք զ'անոնք ինձի :  
— Եւ ո'րքան կը ցաւիմ ձեզի այսքան ոչ հաշ-  
ընել տալուս : Բոյրս չիթաւ տակաւին : Ահ , աւ ա-  
սիկ է նոս :

Պէլլան ներս մտաւ : Նոյն բեհեղեայ ձերմակ  
շրջազգեստը , նոյն ժանեակներու խառնակոյար ,  
նոյն կարմիր վարդերը , նոյն վայելչութիւնը , նոյն  
զեղեցկութիւնը , եւ նոյն ընդունելութիւնը խըն-

դամ երեսով, ազաւ կերպերով ու բաց սրտով:  
— Զեր ազախինն եմ, աէր երէց: Ներեցիք ինձ  
արգեօք անցեալ օրուան անհամբիք անպատճառու-  
թիւնս:

Յետոյ, Ժանին դառնայով ու անոք ձեռք տալով:  
— Բարեւ, պարոն... պարոն... լուն, աշաւ ալ  
չեմ յիշեր ձեր անունը... և առկայն ինծի այնովս  
կը թուի թէ արդէն վաղեմի բարեկամներ Ենք...  
պարոն... . . .

— Ժան Ռէյնո:

— Ժան Ռէյնո... այն, այս է: Բարեւ, պարոն  
Ռէյնո... այլ, կանխառ կ'իմացնեմ ձեզի անխար-  
դախ, որ երբ բարուովին հին բարեկամներ ըլլանք,  
ուժէ օրէն, այն առեն պարոն Ժան սլասի կոչեմ  
ձեզ... : Ըստ ազուոր անուն է Ժան:

Ճաշի հրանցուցին: Մանկածոները եկան աղաքը  
առնելու: Տիկին Սքօթ երէցին թեւը մոռաւ: Պէ-  
թինա, Ժանին թեւը... Մինչեւ Պէթինացի երեւ-  
նալը՝ Ժան ըսեր էր ինքնիրեն: «Պեղեցիսգոյնը՝  
ամիկին Սքօթին է»: Երբ Պէթինացին ժորժիկ ձեռքը  
առանաւ որ իր թեւին տակ կը սահեր եւ Երբ Պէ-  
թինա դէպ իրեն դարձուց իր դրդանոյց երեսը,  
այն առեն ըստ խրովի: «Պեղեցիսգոյնը՝ օրիորդ  
թէռախիզալն է»: Այլ նորէն ինկաւ իր բարբարանա-  
ցը (1) մէջ Երբ երկու քրօջ մէջ տեղը նստաւ: Եթէ  
աջին նայէր, այն կողմէն կը զգալու սպառնալիք սի-  
րահարմելու... իսկ Եթէ ձախին նայէց, վառակը  
մէկին տեղին կ'ելլար եւ ձախ կողմը կ'անցնէր:

Խօսակցութիւնն սկսաւ դիւրին, վառվուոն, ան-

(1) Perplexité. (Հարցուածութ)

կառևկած . . . : Երկու քոյրերը ցնծումի մէջ էին : Պը-  
տոյտ մ'ըրեր էին արդէն սովոր, դարսաւանին  
մէջ : Մտադիր էին, հետեւեալ օրը, երկար պատրա-  
մ'ընել ձիով անտառին մէջ : Զի հեծնալը իրենց  
կազանքն (<sup>1</sup>) էր, խենդ կ'ըլլային : Ժանին ալ հը-  
րայրքն էր այն, այնպէս որ՝ քառորդ մը վերջը՝  
կ'ազաշին զինքը որ հետեւեալ օրուան պայտին  
մասնակցի ինք ալ : Ուրախութեամբ քնողունուեցաւ :  
Աչ ոք իրմէ ազէկ կը ճանշնար չըլակայքը . իր եր-  
կիրն էր անի : Մրշափ երջանիկ պիտի րլլար որ  
հարկեւորէր (<sup>2</sup>) զ'անոնք իր երկրին մէջ ու շատ մը  
տեղեր ցոյց տար, փոքրիկ զողորիկ, զ'որս երրէք,  
տանց իրեն, չէին կրնար ի զիւտ ածել :

— Ամեն օր ձի կը հեծնալը . հարցուց Պէթինս :

— Ամեն օր, և ընդ համբապէս օրը երկու ան-  
գամ : Առառ օտուն սպասիս համար, իրկոնն ալ  
զբոսանքիս համար :

— Առառ օտուն, կանոնի :

— Ժամը հինգունիսին . . . :

— Ժամը, հինգունիսին, ամեն առ առ :

— Այս, բաց ի կիրակիէն :

— Ուրեմն, քանին կ'ելլաք . . . :

— Զորունիսին :

— Լուսած է այն առուն :

— Բարէ, այն միջոցին, բաւ լուսած է :

— Հիանալի բան է, այսպէս ժամը չորսունիսին  
ելնել . . . : Մենք օրերնիս շատ անգամ կը վերջացը-  
նենք այն ժամուն ուր դոք կը սկսիք : Կը սիրէք  
ձեր արշեսոր :

(<sup>1</sup>) Passion որ և հրայր: (<sup>2</sup>) Faire les honneurs.

— Ծանս, օրիորդ : Խնչ աղէկ բան է որ մարդ իր գոյութիւնն իր առջեւ ունենայ շխալ շխտակ, որու եւ մեկին պարտականութիւններով :

— Մակայն, ըստ տիկին Աքօթ, այսպէս ինք իր տէրը չըլլալ, եւ միշտ հնազանդելու պարտապր ըլլալ . . . :

— Թերեւս այդ է որ ամենէն առելի ինձ հաճայական է : Ոչինչ առելի հեշտ է քանի հնազանդիլ . . . եւ ապա, հնազանդիլ սորտիլը՝ միակ կերպի է հըրամացել սորտիլըն :

— Ա՞հ, մրգան հշմարիս պէտք է ըլլայ այդ ձեր ըստծը :

— Այս, անսարդակոյս, շարունակեց երէցը, այլ ինչ որ չըսեր ձեզի, այն է որ իր գնդին ամենէն նշանաւոր սպայն է, որ . . . :

— Կնքահայր, կ'աղաշեմ . . . :

Երէցը՝ հակառակ Ժանին ընդդիմութեան՝ իր սանին դրուատիքը պիտի երգէր, երբ Պէթինա, մէջ մանալով . . .

— Ահօգուտ է, տէր երէց, մի ըսէք ինչ . . . : Զեր ամեն ըսելիքները գիտնք մենք : Պարունին վրայ տեղեկութիւններ առնելու անպատկանութիւնն ըրինք . . . Ա՞հ, քիչ մեաց պարոն Ժան պիտի ըսէի . . . պարոն Ռէյնոֆ վրայ . . . : Աքանչելի են առած տեղեկութիւններնիւ :

— Հետաքրքիր եմ իմանալու, ըստ Ժան :

— Ո՛չինչ . . . ո՛չինչ, չը պիտի իմանաք ոչինչ : Զեմ ողեր ձեզ կարմրցունել, եւ եթէ զուրցեմ հարկաւ պիտի կարմրիք :

Ապա երէցին զառնալով . . .

— Ռայց ձեր վրայ ալ, աէր երէց, աւզեկութիւններ ստիճանք : Եկրեւեայ թէ սուրբ մըն էք . . . :

— Ո՞հ, այդ, շատ համարիտ է, գոչեց Ժան :

Այս անգամ ալ երէցը կարծ կապեց Ժանին հարտառակնութեան : Ճաշը աւարտելու վրայ էր : Այս ճաշը, քիչ մը քիչ յու զմունք չ'էր ունեցեր մինչեւ որ աւարտեր էր զ'այն ծերունազարդ քահանայն : Քանի քանի անգամներ՝ համեմարելով ու բազմակիննիւ շինուածքներ ներկայացուցեր էին իրեն, որոնց զողալով համարժակեր էր ձեռք երկնցնել, վախճառով որ չ'լլայ թաւալգլոր բերէ ամեն բան . բանդովի զնդոզ դ զետեները, զետեսառնելու բուրգերը, աւրէ ամկացները, խմորեզենէ մարտկոցները, սառնոցի ժայռերը : Քանիսթամինին արքան հաշեց սակայն մեծ ախորժակով, և ես չը կեցաւ երկու երեք զաւաթ Շամբաւեայի զինի խմելէ : Չ'էր արհամարժէն կերուխումը : Կատարելութիւնն այս աշխարհի համար չ'է, և եթէ՝ որդիքամարտ թիւնը մասհացու մեղք մը բլլար, ինչպէս որ կ'ըսնի, որչափ բարեց երէցներ դժոխք պիտի երթային :

Սուրհը դարտասին վրայ բերեր էին, դ զետենին առջեւ . քիչ մը հեռուն՝ զիւզին հինուկ ժամացոցին հաթաժած ձայներ կը լսուէր որ ինը կը զարնէր : Մարդ ու պուրակ կը քնահային : Դարտասանին մէջ աներու ու ծածանուան երկայն զիծէր միայն կը տեսնաւէր : Լուսինը՝ յամբարար՝ բարձրաբերձ ծառերուն ծայրերը կը հարկանէր :

Պէթինա զ լսնիներու տուփ մը ստու սեղանին վրային :

— Կը ձխէք . ըստ Ժանին :

— Այս՝ օրիորդ :

— Առէք ուրեմն, պարոն Ժան . . . : Ենչ հոգս, ըստ  
զնաց . . . : Առէք . . . : Բայց ոչ . . . նախ մասկ բրեք :

Եւ կիսաշագագ ձայնով, մէկ կողմէն ուղղ գլանիկ-  
ներու առաջը անոր ներկայացնելով . . .

— Մոթէ է հիմա, կրնաք կարմրիլ սրչամի որ ու-  
զէք: Պիտի ըսեմ արդ ձեզի ինչ որ պահ մ'առաջ  
չըսի սեղանին վրայ: Առաջինների ծերուկ հօտար մը՝  
որ ձեր խնամակաղն եղած է, եկաւ քոյրու առանալ  
ի Շարիզ զ զեռմին գնոյն մձարաններ համար: Անի  
պատմեց մեզի ինչ որ բրեր էք՝ ձեր հօրք մահաւա-  
նէն վերջը՝ երբ դեռ աղայ էք եղեր, ինչ որ այն  
հէք մօրն ու այն հէք աղջկան համար բրեր էք:  
Քոյրու ու ես շատ խանդ ազատեցանք այս բանին:

— Այս, պարոն, շարունակեց տիկին Աքօթ, եւ  
առոր համար է որ զմեզ այնպէս բերկրապատար ըն-  
դունեցանք այսօր: Ամեն եկացի առանկ ընդունե-  
լութիւն պիտի չընէինք, համազատ եղիք: Հիմա՝  
առէք զ լանիկինդ: քոյրու կը սպառէ որ ասյ:

Ժան բառ մը չը դառն պատասխանելու: Պէթի-  
նա հան էր, իր առջեւը տնկուած, գլանիկներու  
առաջը երկու ձեռքին մէջ, աշքերը անկը զծարաց  
ժանին երեսն ի վեր յստած: Պէթինա կը ճաշակէր  
հանոյքն որ իրաւոնէ հանոյք է ու սաստիկ յոյժ եւ  
որ սպառէ ս կրնայ թարգ մահուիլ.

— Կարծեմ քաջարանց մարդու մին է որ կը նա-  
յիմ:

— Իսկ այժմ, ըստ տիկինն Աքօթ, նստինք հո-  
սա, սա փափկութեան զիւերին դիմաց . . . : Առա-  
ձերինիդ առէք . . . : Միսեցէք . . . :

— Եւ չը խօսինք, Սիւզի, չը խօսինք։ Դիւղին  
այս խոր լուսթիւնը Բարիզի ազմկալից ժխորէն ետ-  
քը՝ համբարելի բան է։ Նատինք հոռ, առանց բան  
մ'ըսելու։ Նայինք երկինքը, լուսինք' եւ աստղանքը։

Չորսն ի միտափին, մեծ համոյքով, այս փոքրիկ  
յայտագիծը գործադրեցին։ Սիւզի եւ Պէթինս,  
Հանդարտ, Հանդշած, Երէկի կեանքէն բայցարձա-  
կապէս անթատած, արդէն իսկ սիրելով խան-  
դակամբ՝ այն երկիրն ուր Եկեր էին եւ որ մասցին  
սիրու։

Ժան նուող Հանդարտ էր։ Օրիորդ Ռէռսիզալին  
խօսքերը խորին յուզմունք պատճառ էր էին իրեն։  
սիրու գեռ բարուցին իր կանանց որ ընթացքը չ'էր  
զտած։

Այլ Երջանիկն ամենէն՝ Քօնսթանթէն արքան էր։  
Հոգեզուարձ թերկրանօք վայելեր էր այս փոքրիկ  
միթագէ պը որ Ժանին Համեստոթիւնը այնքան ծանր  
ու քաղցր փորձանքի մը ենթարկեր էր։ Այն որ-  
քան կաթողին կը սիրէր նու իր սանը։ Սրբէք հայր  
մը, ամենէն աւելի գորովագութ Հայրը, լաւ եւ ս  
որուց չ' սիրած իր սիրելագոյն հաւակլը։ Երբ ծե-  
րունի երէցը երիտասարդ ապային կը նայէր, յա-  
նափ կ'ըսէր ինքնիրեն։

— Երկինք լցուց զիս բարութեամբ։ Քահանայ  
եմ ու զաւկի տէր (\*)։

Արքան ուշակորոյս եղաւ թերկրալի անուրիքի մը  
մէջ։ Խորէն իր այն տոջի տունն էր առա, այնպէս  
կը զգար, եւ կարի յոյժ։ առելու առ առելու զո-  
գագործները շփոթեցան ու խառնակեցան։ Անուրիքը

(\*) Հոռված ական քահանայները չ'են ամուսնակար։ Ծ. Բ.

թմբութեան լիովուեցաւ, թմբութիւնը քնէութեան։  
ազէան եղաւ ընդ հուպ կատարեալ եւ անդարձնա-  
նելի։ Երէցը քնացաւ եւ խորոնել քնացաւ։ Այն  
զարմանազան ձաշը և այն երկու երեք գտաւաթ-  
համբանեացի գինիները ոչ ունեաւ պատճառ եղան  
այս շարաշուք արկածին։

Ժան բան մը չէր նշարած։ Մոռցերէր իր կրն-  
քահօր ըրած խօսուումը։ Եւ ինչո՞ւ մոռցեր էր։  
Վասն զի տիկին Աքօթին եւ օրիորդ Բէռսիվալին  
ինելքին վշեր էր որ սոքերնին պարակզին կրու-<sup>(ինչ)</sup>  
ուանեներուն զրոյ դնեն որք իրենց նստած ու բար-  
ձերով խծկուած ու ոիէ մեծ թիկնաթաներուն դէմ  
զրուած էին։ Ապա յուլորար ընկողմեր էին թիկ-  
նաթաներուն մէջ, եւ իրենց բեկեզեայ կիսազ-  
գեսաները քիչ մը վեր ելեր էին, խիստ քիչ, այլ  
չաս էր որ դուրս ալրծէին ջրու մանր սոխկներ, ո-  
րոնց գիծերը խօսու որոշ ու խիստ յասակ կ'երեւ-  
նացին լուսնին լուսովը լուսուորուած ներմանկ ժան-  
եակներու ազուորիմի երկու ալիքներուն ներքեւէն։  
Ժան կը նայէր այս մանր սոքերուն, եւ ինքն իրեն  
ուս հարցումը կ'ընէր։

— Ո՞րոնք ե՞ն փոքրագոյն։

Երբ նա այս խնդիրը լուծել կը թանար, Պէթինս,  
յանկարծ, ցած ձայնով բառ իրեն։

— Պարոն Ժան, պարոն Ժան։

— Օրիորդ։

— Տէր երէցին նայեցէք, կը քեանայ։

— Ո՞չ, տէր Աստուած։ յանցանեքն իմն է։

— Ի՞նչպէս, ձերն է յանցանեքը։ Հարցուց տիկին  
Աքօթ, նա ալ ցած ձայնով։

— Այս . . . : Կնքահայրու առաւօտուն կանուխ  
կ'արթնեայ եւ իրկունք կանուխ կը պատկի . ինծի  
պատուիրեր էր թող չը տու որ քնանայ : Շատ ան-  
գամ, ափկին ար Լօնկվալին տունը, ձաշին վերջը,  
կը շուխէր : Դուք զինքը այնքան բարութեամբ ըն-  
դունեցաք որ իր առջի սպարութիւնները նորէն  
ձեռք տուա :

— Եւ քանի՞ մեծ իրաւամբ . ըստ Պէթինա : Չայն  
չը հանենք չ'արթնեայ :

— Շատ ազնիւ էք, օրիորդ, այլ երեկոյթն ահա  
կը զովանայ քիչ մը :

— Հու, իրաւ է . . . : Կրեայ հարրուխ ըլլալ : Կե-  
ցէք, երթամ իմ կրկնոցներու մի կը բերեմ :

— Կարծեմ թէ, օրիորդ, լաւագոյնն այն է զին-  
քը ձարսարութեամբ արթնցնելու ջանալ, որպէս  
զի չը կառկածի թէ՝ դուք իր քնանալը տեսաք :

— Թաղէք ինձի, ըստ Պէթինա : Սիւզի, երգենք  
միասեղ, նախ շատ ցած, յետոյ կամաց կամաց ձայ-  
ներնիս կը բարձրացնենք . . . : Երգենք :

— Սիւզի . . . այլ ինչ երգելու է :

— Երգենք՝ իր մանկական . . . : Խօսքերը պարա-  
գային յարևար են :

Սիւզի եւ Պէթինա երգել մկանն .

Օշ թէ թեւեր ունենայի ես երկու

Փետրուսուաղ փոքրիկ թաշուն ոգայտու, եւլն .

Իրենց քաղցր ու թափանցիկ ձայնը՝ այս խորին  
բարութեան միջ՝ մասիսներով կը հնչեր :  
Արքան բան մը չէր լսեր, չէր երերար :

Ժամ՝ զմայլած մնացեր իւրեք ոյս փոքրիկ դաշ-  
նակցութեան, կըսէր ինքնիրեն.

— Մինչն թէ կնքահայրո չուտով չ'արիննար:

Բայց ահա ձայները երթալով տևելի պայծառ ու  
տևելի բարձր կ'եղինին:

Սակայն քունիս մէջ կը թուշիմ ես ու քեզ  
կը քնառամ՝ այլ միւս քեզի հետ եմ ես: Եւն...

Եւ արբան տակաւին չէր խլրտեր:

— Խ'նչ անուշ կը քնառայ ըստ Սիւզի... ոչիր  
զործել է արթնցնելը:

— Այլ սակայն պէտք է...: Աւելի բարձր, Սիւ-  
զի, աւելի բարձր:

Սիւզի եւ Պէթինս ազատ թողոցին որ ելոց  
ձայներին ողեղ նուազներով.

Զը կասիր քուն, թէ եւ արքայն տայ հյանձնն,

Եւ ես կ'ուզեմ որ սցորին արթննամ. եւն:

Երէցը քունին արթնցու ընդուռուցեալ: Այսն  
վայրիկեան մը երկիւղին անհանդիստ եզաւ. ասպա  
ոգի տուռ...: Յայտ իսկ էր որ չէին առ սած քը-  
նացած ըլլալը: Վեր կանգնեցու. հասկեցուց  
զգուշուոր խոհեմութեամբ, կանցուկ մեղմիկ...:  
Ազատեր էր:

Քառորդ մը վերջը, երկու քոյրերը, երէցն ու  
ժաներ կ'ուզեւորէին մինչեւ դարաստանին պզտիկ  
զուռը, որ գիւղին վրայ կը բացուէր, Երիցաստ-  
նէն հարիւր քայլ անդին: Մօտ եկեր էին դրան,  
Երբ յանկարծ Պէթինս ըստ Ժանին:

— Ա՞հ, պարոն, երեք ժամե՞ն ի վեր հարցում մ'ունիմ ձեզի ուղղելու : Այս տառաօտ, եկած առենիս, ճամփոն վրայ՝ դեղին պետքը նըրանհասար երիտասարդի մը հանդիսեցանք . ուեւ մի մը նըրտած էր . անցած առենքը բարեւեց մեզ :

— Բոլ ուր լավագուանն է, իմ բարեկամներէ ու մէկը : Արդէն սրանի ունեցած է ձեզի ներկայանալու . . . բայց քիչ մը հարեւանցի : Ուստի կը բազմայ կրկին անդ ամ ներկայանալ :

— Լու ուրեմն . այս օրերս որ մը բերէք մեզի, ըստ ախիլին Սքօթ :

— Ամուսն 25 էն ետքը, դոչեց Պէթինու . . . Ոչ անկէ առաջ, ոչ անկէ առաջ : Ո՛չ ոք կ'ուզնք տեսնել մինչեւ այն օրը, ոչ ոք, բայց ի ձենէ, պարոն Ժան . . . այլ դուք, շատ արտաքոյ կարգի բան է այս, եւ չը գիտեմ ալ թէ ինչպէս առանկ եղաւ, զուք արդէն մեզի համար ոչ եւս էք ոք : Շատ կոկիկ չեղաւ թերեւս այս մեծարտները, այլ մի սընալիք, իրաւցնէ մեծարտնեք է . . . Այս կերպ խօսելով միտքս վերջին աստիճան ազու եւ հանոյ ըլլալ է ձեզի : (ի-թէ)

— Եւ էք իսկ, օրիորդ :

— Քանի է որ բարերազդութիւն ունեցայ միտքս լու հասկցնելու . . . : Յանութիւն, պարոն Ժան, եւ առ զաղիւ :

Տիկին Սքօթ եւ օրիորդ Բէռախիմալ կամաց կամաց դղեսակին համբան բանեցին .

— Եւ այժմ, Սիւզի, ըստ Պէթինու, յանդիմեցէք զիս խստիւ . . . կը սպասեմ կոր . . . : Արժանի եմ յանդիմանութեան :

— Ձեզ յանդիմանեմ: Խնչո՞ւ:

— Ապահով եմ որ հիմա սիստի ըսէք թէ՝ շատ ընտաներու վարուեցաց այս երիտասարդին հետ:

— Զէ, չը սիստի ըսէմ . . . Այս երիտասարդը՝ տաաջին օրէն՝ շատ բարեբառատիկ տպաւորութիւն մը բրաւ վրաւ: Կատարեալ վասահութիւն կ'ազդէ ինձի:

— Ինձի ալ:

— Համազուած եմ թէ ազէկ սիստի ըլլայ որ ջանանք երկուքս ալ զ'անի մեզի բայեկամ ընելու:

— Ինձի մեայ՝ բոլոր սրատվն . . . Մանաւանդ թէ, Սիւզի, շատ երիտասարդիներ տեսայ հանչցայ որմէ հետէ միրանուայի մէջ կ'առրինք . . . ո՛չ, այս, շատ տեսայ . . . Եյ լու, ասի առաջինն է, իրաւցինք առաջինք, — որուն աչքերուն մէջ չը կարգացի ակն յայտնի սա խօսքը: «Ասուուած իմ, որքան գոհ սիստի ըլլամ սա սլզատիկ աղջկան միլիոններուն հետ եթէ ամսւանանամ»: Այս խօսքերը որոշ որոշ գորուած էին բոլոր ուրիշներուն աչացը մէջ . . . իսկ իր աշացը մէջ ոչ . . .: Այս որ ըսի, առւն մասնք ահա . . . Բարի գիշեր, Սիւզի, եւ առ վազիւ:

Տիկին Աքո՞թ զնաց իր աղաքը տեսնել եւ համրուրել քոներներուն մէջ:

Պէթինս պատշ գամին վանդակին յեցած արմակով՝ կեցաւ երկուր տանի:

— Կարծեմ թէ, կ'ըսէք ինքնիրեն, եւ այս երկիրը սիստի սիրեմ:

## ԵՇ-

Հետեւ առ առու օստոն, զօրսավարժութենէ դարձին, Բոլ առ Լամբատանս Ժանին կը սպասէր զօրսանցին բազին մէջ։ Հազիւ Ժամանակ առու որ ձիէն վար իջնայ . . . եւ՝ առանձին մետքուն պէս.

— Պատմէ, ըստ, պատմէ շուտով, երէկուան ձաշդ։ Ես զիրենք անուեր էի առու օստոն։ Պրատիկը չորս սեւ պէշտապիկներ կը վարէր . . . եւ ինչպէս պէս (<sup>(1)</sup>) . . . Բարեւեցի զիրենք . . . Խոսեցաղ իմ զրաս։ Զիս հանչցեր են։ Ե՞րբ կը տանիս զիս ի Լոնկվալ, Բայց պատասխանէ, պատասխանէ նայինք։

— Պատասխանէմ, պատասխանէմ . . . Ո՞ր հարցումիդ նախ։

— Վերջինին։

— Թէ Երբ պիտի տանիմ քեզ ի Լոնկվալ։

— Այս։

— Լոն, տասը օրէն։ Այս միջոցին ոչ ոք աեսնալ կ'ուզեն։

— Բւրենի տասը օրէն վերջը միայն պիտի երթաս ի Լոնկվալ։

— Ո՞չ, ես, այսօր պիտի երթամ, Ժամը չորսին։ Բայց, ես, չեմ համարուիր։ Ժան Ռէյնո, երէցին սահը . . . Ահա ինչու համար այնքան դիւրութեամբ Քափանցեցի այս երկու սիրուն կանանց վաստակութեանը մէջ։ Եկեղեցւոյ հովանառութեան ներքեւ

---

(1) Crâne. (բռայր)

եւ անոր երաշխառութեամբ ներկայացաւ . . . : Եւ ազա հասկցան թէ կրնամ մանր մանր ծառայութիւններ մասուցանել . . . երկիրը խխտ աղքէ կը հանչնամ . . . զիս իրրեւ առաջնորդ պիտի գործածեն . . . : վերջապէս, ես չ'եմ ոք, մինչդեռ դու, կոսո թօլ ոք լավառանու, դու մի ուն ես : Ռւատի, մի վախնար, քու կարդդ ալ պիտի գայ երբ գահ տօներին ու պարահանդէսները, երբ պէտք ըլլայ ժայլիլ, երբ պէտք ըլլայ պարել : Դու այն ստեն պիտի հառագայթես վաս ի վաս եւ ես պիտի մանամ նորէն խոհարհաբար իմ նումն թեանս մէջ :

— Մազրէ զիս որչամի կ'ուզես . . . : Ճշմարիար սաէ որ, այս տասը օրուան միջոցը, դու համբայ պիտի տանես . . . համբայ տանես պիտի . . . :

— Խնչոլէս, համբայ պիտի տանեմ . . . :

— Նոյէ, Ժան, իս հաւացնելու ես ելեր թէ պրդէն սիրահարած չես այդ երկու կանանց մէկին : կարելի բան է : Այնքան գեղեցկութիւն, այնքան պերճանեք : Ո՞հ . . . պերճանեքն աւելի ալ գուցէ քան զգեցկութիւնը : Այսքանի պերճանեք զիս կը գըլլորէ, զիս վեր ու վայր կ'ընէ : Այն չորս պէշտապիկները իրենց ձերմանկ վարդէ փողուուկներով, զիշերը երազս եկան . . . : Խոկ այն պղտիկը . . . Պէթինաւ . . . անսանկ չ'է :

— Այս, Պէթինաւ :

— Պէթինաւ . . . կուսուհի, Պէթինաւ ոք լավառանու, Խնչ սիրուն կ'ըլլայ : Եւ ինչ կոսորենալ պըզամիլ էրիկ մը կ'ըլլամի ես անոր : Խելքէ գուրս հարուստ կ'ոջ մը ամուսինն ըլլալ, աշան իմ հակառապիտս : Կարծուածին շատ դիրին բան չ'է : Պէտք է

հարուստ ըլլալը դիմեալ, եւ եռ պիտի ունենամ  
այս տաղանդը։ Փորձով ցուցոցի արդէն։ սակա՞  
կերայ ո՞ք կերայ . . . Եւ թիւ մայրս չը կեցնէր . . .  
Սակայն պատրաստ եմ նորէն ականքու . . . Ահ,  
քանի երջանիկ կ'ըլլայ նա ինծի հետ։ Դիւթոթեանց  
իշխանուհւոյ մը կեանքք վարել կուտամեռ անորու . . .  
Իր պերճանաց մէջ իր ամսունոյն ձաշակը, արուես-  
տը, զիսութիւնը պիտի զգայ . . . Կեանքքս պիտի  
անցնեմ զինքը պահունելու, փողփողելու, պերեւե-  
թելու, յաղթական պրատցընելու ընդ աշխարհ։  
Պիտի ուսումնառութեամ իր զեղեցկութիւնը որ իրեն  
վայելու չըրջանաւիր մէջ ընդելուզեմ զայն . . . և թէ  
չըլլար անի, ըսէ նա իւրովի, ես նուազ զեղանի  
կ'ըլլայի . . . Միայն պիտի չը սիրեմ զինքը, այլ  
նաև զուարճացնեմ . . . Ստակին փոխարէն պիտի  
ունենայ թէ սէր եւ թէ հաճայք . . . Հանոս, Ժան,  
բարի աշխայժ մը. տաք զիս այսօր տիկին Աքօթին։

— Չեմ կրեար, կը հուաստեմ քեզ։

— Եյ լու, տաօր օրէն միայն, բայց կանխառ  
կիմացնեմ քեզի, այն տան Լոնկվալի մէջ կը տե-  
զաւորուիմ ու ալ տեզէս չ'եմ խախտիր։ Նախ, մօրս  
հաճելի պիտի ըլլայ այս։ Դեռ քիչ մը տարցած է  
Ամերիկուհեաց զէմ, կ'ըսէ թէ այնպէս պիտի կար-  
գի զնէ որ չը տեսնուի հետերնին, սակայն եռ կը  
հանչնամ մայրս։ Այն օրը որ իրկուն մը ներս  
մտնալու ո ըսեն իրեն։ այսպիսի, փոքրիկ սիրա-  
սքանչ աղջկան մը սիրալ վաստկեցայ որ քանի մի-  
լիօնի գրամագլխով եւ երկու կամ երեք միլիօն ե-  
կամուռով կը տառապի . . . և կը չափազանցեն երբ  
հարիւրաւոր միլիօններու կը հանեն։ ճիշդ գումա-

բը այս է, եւ այս կը բառէ ինծի . . . . Այս ըստն  
իրկունո՞ւ մոյրս հրառուի պիտի . . . վասն զի, իրօք,  
ինչ կը ցանկաց ինծի համար. ինչ որ ամեն բարի  
մոյր կը ցանկաց իր որդւոցն համար, մանաւանդ  
երբ այն որդիք յիմարութիւններ ըրած են . . . հա-  
րուստ ամենութիւն մը կամ զգոյշ ու պատկան  
կապակցութիւն մը ամենուացեալ տիկինի մը հետ-  
երկու առակցութիւնն (1) ալ կը գտնեմ ի լոնկվալ, —  
եւ ես մոազիւր կը յարմարիմ մէկին կամ միւսին.  
Միայն թէ՝ տասը օրէն, ինձ զեկուցանելու բարե-  
հաճութիւնն ունենաս . . . Պէտք է խմացնես ինծի  
թէ երկուքին որը ինծի կը թողուա. տիկին Աքօթը  
թէ օրիորդ Բէռսիվալը . . . :

— Իենց ես: Չեմ մոռծեր եւ չը պիտի մոռ-  
ծեմ . . . :

— Մտիկ ըրէ, Ժան, զու խմասութիւնն ու բա-  
նաւորութիւնն իսկ ես, կընդունիմ. այլ ինչ ալ  
ըսես եւ ինչ ալ ընես . . . . Մտիկ ըրէ, եւ բայ յի-  
շէ այս ըստն. Ժան, զու պիտի սիրահար խնաս  
այդ տանը մէջ:

— Չեմ կարծեր, պատասխանեց Ժան խնդալով:

— Իսկ ես, սպահով եմ. . . . Ի կրկին աեսու-  
թիւն. քու գործքերուդ կը թողում քեզ:

Ժան, այն առաւօտուն, բալորովին անկեղծ էր:  
Առջի գիշերը խիստ լա քնացեր էր: Իր երկրորդ  
առաւակցութիւնը՝ երկու քրօջ հետ՝ իրուէ թէ հը-  
մոյքով մը փարատեր էր այն թեթև վրդովնեն-  
քը որ իր սիրու յուզեր էր իր առաջին ականակցու-  
թիւնն վերջը: Կը պատրաստէր զ'անոնք վերըս-

(1) Combinaison.

սին աւետներու մեծ համացքով, այլ մեծ համագարուսութեամբ: Այդ առանց մեջ խիստ շատ պատկ կար, որպէս զի իրեն նույն իւնուդ պարունակութիւն մը ուրը կարենար այս թիւնեւ աւետ գույնու:

Բարեկամութիւնը, այն ուրիշ բան էր: Բարու պատմութիւնը մաս մեջ էր և բարու պարութեամբը պիտի փորձէր՝ խաղաղ յանդուշի՞ն՝ այդ երկու կերպով յարգանց ու ապահովանառութեացը<sup>(1)</sup>: մեջ հաստատութիւն Պիտի ջանար որ Ախողին եւ Պէթինուցին գեղեցկութիւնը շատ աչքին չը զարնէ: պիտի ջանար որ խելքը միտքը չը կորածունէ ինչպէս ու եզեր էր նաև խորդ օրը, ակնկատուց ըլլալով այն շորս փոքրիկ ուսքերուն՝ որք ապարակ զին կուռանեներուն զբաց համագչեր էին: Երկու քոյրերը որտարաց՝ պատագին ըսեր էին իրեն: «Մեր բարեկամը պիտի ըլլաք: Ահա միայն ինչ որ կը վասփարէր, իրենց բարեկամնեւ ըլլալ: Եւ պիտի ըլլաք:

Ամեն բան, հետեւեալ առարք օրուան միթուցը, ամեն բան միաբանեցու այս ձեռնարկութեան յաջողութեանը համար: Ախողի, Պէթինս, արրան եւ Ժան նոյն կետնքով ապրեցան, ուրու ու անկառական մասերն թեան մէջ: Երկու քոյրերը առառ առանց երկար սպասաներ կընէին երեցին հետ կառքափ: Եւ, իւս օրէն ետքը, Ժանին հետ, երկար պատցաներ ձիով:

Ժան ազ չէր աշխատեր իր զդացու մերը վերտուծելու: ազ չէր հարցներ ինքնիրեն թէ՝ աջին պիտի կայից երամ ձախին: Այս երկու կանանց համար հառաջար անձնութիւն մը, հառաջար ազա-

(1) Affection.

պատահք մը կը զգար յինքն : Կատարելապէս եր-  
շանիկ , կատարելապէս անդորր էր : Ուրեմն սիրա-  
հարեալ չ'էր , զի սէրն ու անդորրութիւնը քիչ ան-  
գամ բնակակից կ'ըլլան մի եւ նոյն սրտի մէջ :

Սակայն՝ Ժան՝ սակաւ ինչ մտահոգութեամբ եւ  
ախրութեամբ կը տեսնէր որ կը մօտենայ այն օրը՝  
որ թիւռներները , Նոսթօնները եւ բոլոր ամերիկ-  
եան դաղթականութեան ծվանքը պիտի բերէր  
Լոնկվայ նետէր : Շատ շուտ եկաւ հասաւ :

Յանիս 24 արրավթ օրը , Ժանը չորսին , Ժան  
դղեակից զնաց : Պէթինայ յոյժ ցաւագին ընդունեց  
դինքը :

— Ի՞նչ գէշ հանդպեցաւ , քոյրու ահա հիւանդ :  
Բան մը չ'է , վոքրիկ անգար (¹) մը , վազը բան մը  
չը մնար : Բայց բանն այն է որ չ'եմ համարժակիր  
ձեզի հետ մինակ երթալ սկսուիլ : Հոն , Ամերիկայի  
մէջ , կը համարժակիր . իսկ հոս , ոչ , անհանկ չ'է :

— Անշատ ոչ , պատասխանեց Ժան :

— Պարտաւորեալ եմ ես դարձեել ձեզ , եւ այս  
ցաւ կը պատճառէ ինծի :

— Ինծի ալ մեծ ցաւ կը պատճառէ , ձզել եր-  
թալ եւ կորսնցնել այս վերջին օրը զ'որ կը յու-  
սայի ձեզի հետ անցընել : Սակայն , որսվհեաւ հարոլ  
է . . . : Վազը կուզամ ձեր քրօն վրայ լուր առնե-  
լու :

— Ինքն անձամբ լուր կուտայ ձեզի : Կը կրկնեմ ,  
շատ ոչինչ բան է : Բայց մի ժամանչիք այսպէս փու-  
թով , կ'ազաշեմ : Կը հաձիք շնորհել ինձ վոքրիկ  
քառորդ . մը տեսակցութիւն : Խօսելիք ունիմ ձե-

(¹) Migraine.

զիւ Հուսաւ նոտեցէք . . . եւ ասկա , զիս լու մորիկ բրէք : Տայրս ու ես դիտաւորութիւն ունեինք ձեզ պաշարելու , այս իրկուն , հաշէն ետքը , սրահին մէկ փոքր անելիւնին մէջ , եւ այն ատեն քոյրս ձեզի խօսք սիխոտի բանար , անի սիխոտի ըսէք ձեզի բնչ որ ես սիխոտի փորձեմ ըսել արդ՝ մեր երկուքնու կողմէն : Այլ քիչ մը յուզեալ եմ . . . : Մի ծիծաղիք : շատ լուրջ բան է : Ե՛ու զենք երկուքս ալ չնորհակալ ըլլալ ձենէ , որ գալերեռու ի վեր՝ այսքան հաճելի , այսքան բարի , այսքան անձնուեց եղաք , այսքան . . . :

— Ո՞հ , օրիորդ , ի՞ազաշէմ , ինծի անել է . . . :

— Ո՞հ , մի ընդհատէք խօսքս . . . սիխոտի շփոթէք զիս . . . Չեմ կրնար մէջն ելլալ . . . Եղ պնդեմ սակայն , թէ մեզի անել է չնորհակալ ըլլալ , եւ ոչ ձեզի : Մենք հոս եկանք երկու օտարու հիներ : Անմիջապէս բարեկամներ զանազան հրաժանքն ունեցանք . . . այն , բարեկամներ : Դոք մեր ձեռքէն բռնեցիք . . . մեզ մեր վարձակալներուն , մեր պահպաններուն տարիք , մինչդեռ մեր կնքահայրը մեզ իր ազգայտներուն կը տանէք . . . ամեն սիզ այնքան եղ սիրելին ձեզ , որ խորյն , ձեր յանձնաբարութեան վրայ վասահանալով , սկսան մեզ ալ սիրել քիչ մը . . . Եղ պաշտեն ձեզ այս երկրին մէջ , գիտիք :

— Այս Երկրին մէջ ծնած եմ . . . Բոլոր այս բարի մարդիկը կը ձանշեն զիս ազայտթենէս ի վեր եւ երախտագէտ են ինծի պապուս եւ հօրս իրենց բրածներնուն համար : Եւ ապա . . . իրենց զարմէն եմ ես ալ , զիս զայդիներու զարմէն : Խմ ասպարագս

հաղագործ էր Պառժը ըստ միջ, ասկէ երկու փար-  
սախ անդին զիւղ մը :

— Վահ, վահ, շնչարտ կերեւնաք այդ բա-  
նին համար :

— Ոչ համար, ոչ նուասա :

— Ներում կը խնդրեմ . . . հալարսութեան փոքր  
շարժում մոռնեցաք : Բարեւ, ես ալ կը պատաս-  
խանեմ ձեզի որ մարս կողմէն իմ ապուսասու ալ ա-  
զարտակի : վարձակալ էր Պարթանեի միջ : Վերջին  
գարուն Ետքերը Գանաստա ելաւ գնաց, երբ Գա-  
նաստա տակաւին Ֆրանսա էր . . . : Շատ կը սիրեք  
ձեր ծնելուկան երկիրը :

— Շատ : Թերեւս քիչ առենին թողելու պիտի  
հարթագրիմ :

— Ինչո՞ւ :

— Երբ պաշտօնիս միջ առաջ երթամ, զիս ու-  
րի գունդի մը միջ կը զբկեն, եւ այսպէս տեղէ  
տեղ պիտի պարտիմ . . . : Այլ այս սասցդ է որ, երբ  
ծեր հազարտակեամ մը ըլլամ կամ ծեր գնդապետ մը  
պաշտօնէ քաշուած, այն տանին պիտի գամ ասպրիւ  
և մեռնիլ հաս, հօրս փռքրիկ տանը միջ :

— Միշտ տռանձնին :

— Ինչո՞ւ առանձին . . . : Կը յուսամ թէ ոչ . . . :

— Ամուսնակալու դիտաւորութիւն ունիք :

— Այն, անսարտակայս :

— Եւ ամուսնակալու ետեւէ էք . . . :

— Ոչ . . . : Մարդ կրնայ ամուսնակալու զիսա-  
ւորութիւն ունենալ, բայց սկզբ չէ որ ամուսնա-  
կալու ետեւէ ըլլայ :

— Կան սակայն մարդիկ որք ամուսնակալու ե-

առեւէ կըլլան . . . . Օ՞ն թէ , կ'երաշխառոքեմ ես որ  
այնպէս է . . . եւ նոյն իսկ դուք , առաջ ձեզ ամսու-  
նացնել ու զեցին :

— Ի՞նչպէս զիտէք դուք :

— Ահ , ես խիստ ազէկ զիտէմ ձեր ամեն մանր  
դործերը . . . Փուք , ինչպէս կըլլան , աղիկ կըլլու  
մին էք . . . եւ , կը կրկնեմ , ձեզ ամսունացնել ու-  
զեցին :

— Ո՞վ բառ ձեզի :

— Տէր երէցը :

— Կերահայրս յանցուոր է , բառ Ժան ուժգո-  
նութեամբ մը :

— Ո՞վ , ոչ , յանցուոր չէ : Եթէ յանցուոր մը  
կայ ես եմ , իսկ յանցուոր բարեսիրութեամբ , եւ  
ոչ հետաքրքրութեամբ . կ'երդնում ձեզի : Հասկցայ  
որ ձեր կերահայրը երբէք այնքան երջանիկ չէ որ-  
քան ձեր վրայ խօսած առեն . ուստի ես ալ , ա-  
ռառ առան երբ մինակ կ'ըլլամ իրեն հետ , մեր շրր-  
ջագայութեանց ժամանակ , իրեն հանցյը ընելու  
համար՝ ձեր վրայ կը խօսիմ , ու ինք ալ ձեր ոպատ-  
մութիւնը կ'ընէ ինձի : Շատ ազէկ վիճակ ունիք ե-  
զեր : Հատ հանգիստ կ'առլիբ : . . . Երկու հարիւր  
առաներեք ֆրանք կ'առնէք ամսուր կառ ամսարու-  
թենէն . . . եւ այսքան ալ առնթիս : Ճշդիւ այսպէս է :

— Այս , բառ Ժան , որուեցով որ այ մասդիւր  
յանձն առնու երէցին թուլքերանութիւնները :

— Ութ հազար ֆրանք եկամուտ ունիք :

— Դրեթէ , ոչ բարանվին :

— Աւելցուցէք առաք վրայ ձեր առներ , որ եռ-  
առն հազար ֆրանք մը կ'արժէ : Աերջապէս , շատ

աղեկի պիհակի միջ էք, և արդէն ձեր ձեռքը խօնդ-  
րեցին:

— Ձեռքս խնդրեցին . . . Աչ, ոչ ուժուու տեսաւ

— Իրան, իրաւ: Երկու անգում . . . Եւ զուք մեր-  
ժեցիք երկու փառաւոր ամեն անութիւն, կամ եթէ  
լաւ եւս կը համարիք բաել, երկու փառաւոր օժիւ:  
Արշաբ մարդիկ կան որոնց համար այս երկուքը մի  
եւ նոյն բանն է: Երկու հարիւր հազար փրանք մէկ  
կողմէն, երեք հարիւր հազար միւս կողմէն: Եթե-  
րենայ թէ ասրապայման զումար է այս երկորսին  
համար: արդ մերժեցիք զուք: Բաելք ինչո՞ւ մեր-  
ժեցիք: Եթէ զիսնայիք նրանի հետաքրքիր եմ ի-  
մանալու:

— Լաւ որքեմն: Երկու սիրուն զեռ ասեի աղջկունք  
էին . . .

— Այդ յացտիկ է: միշտ այդպատէս կ'ըսուի:

— Այլ որ հազիւ կը ճանչնայի: Ստիպեցին զիս,  
— զի ես զէմ կը կենայի, — ստիպեցին զիս երկու  
կամ երեք երեկոյթ անցընելու անոնց կես, անց-  
ելով ձեռն:

— Եւ ապա՞:

— Ապա, չը զիսեմ ինչպէս բացառեմ ձեզի,  
իւ զգացի բնու չփաթութիւն, սրան թունզ, մը-  
տասանվութիւն, զրդ ովտունք . . .

— Ի մի բան, բնու Պէթինս աներեւուն, բնու  
թիթեւ կասկած մը սիրոյ:

— Զէ, եւ ոչ մի . . . Եւ խելացութիւն ըրի որ  
մասյ նորէն իմ անուրին սրանիկ խորշեալիքն մէջ,  
զի կը մասմէմ որ աւելի բաւ է չ'ամեն սեանալ, բան  
թէ ամեն սեանալ առանց սիրոյ: Ահա իմ կարծիքս:

— Խամ կարծիքու ալ ոյզ է :

Պէթինա Ժանին կը նոյել, Ժան ալ Պէթինոյին :  
Եւ ահա յանելարժ , զարմացան մնացին ընդ ոյս եր-  
կուքն ալ , բան մը չը գտան որ իրարու բուին , բը-  
նաւ բան մը չը գտան :

Բարեխաղդ արար , ոյս միջոցին ; Հառովի եւ Պէլ-  
լս , ուրախութեան բարձր աղազակիներով , սրահին  
ներս խու ժեցան :

— Պարսն Ժան , պարսն Ժան , հոգ էք պարսն  
Ժան : Եկէք տեսէք մեր ալէշասպիկիները :

— Ահա , բոստ Պէթինա , քիչ մ'անորու ձայնով ,  
կտվարսր եկաւ պահ մ'առաջ Բարիդին եւ աղայոց  
համար մաներադ բառեկոն ալէշասպիկիներու քերու : Եր-  
թանք տեսնենք , կը հաճիք :

Դային ալէշասպիկիները տեսնելու , որք սուսպի-  
սեցմատիմներու թագ ու որին ախտներուն մէջ զըր-  
ուելու արժանի էին :

## □-

Երեք չարտթներ սնցան : Ժան , հետեւեալ օրը  
սիստի երթայ իր գունդին հետ հրավարժութեան  
կրթարանները . իր զինուորի կեանքովը սիստի ապ-  
րի . տասն օր ձահասպարհաց վրայ ընդ երթալին ու  
գտանալ տասն իջևանի , տասն օր ալ վրանին տակ ,  
Սէռքօթի բանակը , Օրլի անի անտառին մէջ : Օ-  
գոստոս 10ին զօրագունդը նորէն Սուվինի սի-  
տի մանաց :

Ժան ոչ եւս է հանդարս : Ժան ոչ եւս է երջանիկ : Անհամբերութեամբ եւ միանգամայն ահով ու գաղով կը տեսնայ որ կը մօտենայ մեկնելու վայրեկ-եամբ . . . Անհամբերութեամբ՝ զի իրր մարտիրոս կը չարչարտուի . կը ժութայ որ ազատի այս չարչա-րանքն . . . Ահով ու դոզով՝ զի այս քանի օրուան մէջ, առանց զ'անի տեսնելու, առանց անոր խօ-սելու, վերջապէս առանց անոր, ի՞նչ պիտի ըլլայ ինք : Անի՝ Պէթինան է . կը պաշտէ զ'անի :

Ե՞րբէն ի վեր : Առաջին օրէն ի վեր, այն հան-դիսլումէն ի վեր, մայիս ամսուն, երեցին պարտէ-զին մէջ : Ահա ճշմարտոթիւնը : Այլ ժան կը մար-տնչի ու կը մաքսուի այս ճշմարտոթեան զէմ : Կը կարծէ թէ Պէթինան այն օրէն ի վեր մխայն կը սի-րէ ուր երկոքնին զուարձար, բարեկամարար խօսակցեր էին ժորդ սրահին մէջ : Կապոյտ բազմու-ցին վրայ նստած էր նու, սրահուհանին մաս, ու խօսելով ձլութալով, մէկ կողմէն ալ, Պէլլափին պէ-սլէքին՝ ճարոնացի իշխանուհոյն, քրքրած պերե-ւեթը շակուելով կը զրունուր, որ թիկնամթուի մը վրայ ձգուած էր, եւ զ'որ Պէթինա, մեքենարար վեր ստեր էր :

Ինչո՞ւ օրիորդ Բէռսիվալին վշեց խելքին՝ խօսե-լու իրեն այն երկու աղջկանց վրայ որոնց հետ սի-տի կարևոր ամուսնուալ : Իրաւ է որ, այս հար-ցումքը զինքը չ'էր կապկալեր : Պատասխաներ էր որ՝ եթէ ամուսնութեան համար բնաւ բերմոնք չ'էր ունեցած այն առեն, վասն զի այդ երկու աղջ-կունքն իրեն բնաւ սրտի թունա, բնաւ յուզմոնք չ'էին պատճառած : Այսպէս ըսելով կը ժպտէր . այլ

քանի մը վայրկեան վերջը ալ չէր ժապաէր։ Այն  
սրտի թունուրը, այն յուզմոնքները, յանկարծ  
կը սկսէր խմանալ։ Ժան չը պատրեց ինքզինքը. վեր-  
քին խորութիւնը շափեց. սրտին մէջ անդէն էր  
զարնու աժ։

Սակայն Ժան ինքզինքը չը ձգեց. Այն օրն իսկ,  
զայսած առնենը, կ'ըսէր ինքնիրեն։ Այն, ծանր է  
վիճակս, շատ ծանր է, սակայն պիտի ապատի՛ ։ Ը-  
լրած խոնդութեանը բարութանք մը կը բնառէր.  
պարագ այներուն յանցանք կը գտնէր։ Այդ գրաւ-  
նոյն աղջիկը, տասն օրէ ի վեր, շատ իսկ իրեն ե-  
զեր էր, շատ իսկ իրեն մխայն։ Ի՞նչպէս զինանար  
այսօրինակ վորձութեան։ Արբեցած էր անոր զմայ-  
լիք, անոր չնորհալի գեղեցկութեամբ։ Այլ, հե-  
տեւ եալ օրը, քսան հոգիներ սիտի գային ի դըզ-  
եակ, եւ վախճանը սիտի ըլլար այս վատենդաւոր  
մուշրութեան։ Քաջութիւն սիտի ունենար, մէկ  
կողմ սիտի քաշուէր, բազմութեան մէջ սիտի կոր-  
սուէր, նուազ տակալ եւ նուազ մօսէն սիտի տես-  
նէր Պէմինան . . .։ Չէր կրնայ մոքէն անցնել որ  
ընան չը տեսնէ։ Կ'ուզէր Պէմինային բարեկամը մը-  
նալ, որովհետեւ բարեկամը մխայն կրնայ ըլլալ։  
Վասն զի կազ ուրիշ մասծոթիւն մ'ալ որ եւ ոչ  
մուս գտներ էր Ժանին մաքին մէջ. այս մասծո-  
թիւնը ոչ թէ այլանդակ կ'երեւնար իրեն, ոյլ ան-  
հեթեթ։ Աշխարհի մէջ Ժանին պարկեւած մարդ չը  
կար, եւ Պէմինային հարստութիւնը ստուգ կ'ազ-  
գէր իրեն, իրաւցիէ տուկում։

Ստուգիւ, բազմութիւնը, յունիս 25 էն ի վեր,  
Լոնկվալը առեր գրաւեր էր։ Տիկին Նութօն իր

որդւոյն Տանիել Նոսթռնի հետ եկեր էր, և ախ-  
կին թիւոնէր իր որդւոյն Ֆիլիք թիւոնէրի հետ-  
այս երկու երիտասարդք՝ Տանիել եւ Ֆիլիք, Եռ-  
սունեւ չորսերու համբաւաւոր ընկերութիւնն էին :  
Վազգեմի բարեկամներ էին . Պէթինաւ իրր այնպիս-  
եաց վարուեր էր անոնց հետ, և կատարեալ ան-  
կեղծոթեամբ յայտներ էր անոնց որ պարագ տեղը  
ժամանակին կը կորսեցու եին . ասկայն անոնք չէին  
վհասարեր, և Պէթինային շուրջը բազմափոյթ ու  
բազմաջան վորք դարձասի մը կեղրոնն եղեր էին :

Բալ ար Լամբատանս իր մուսն ըրած էր ի ան-  
սարան, ու շատ շուտով ամենուն բարեկամն եղեր  
էր . Զուարձութեան առհմանեալ երիտասարդի մը  
վայլուն ու խառնակային դաստիարակութիւնն ա-  
ռած էր . երր պրօստեաց խնդիր ըլլար, ձի, քրի-  
քէթ, լու—թէնիս, բոլո (\*) , պար, բառեղծուած եւ  
կատակերդութիւնք, ամենուն պատրաստ էր, ա-  
մենուն մէջ կ'առաքինանար : Իր գերազանցութիւ-  
նը ակներեւ վայրեցու, ամենին ընդունուեցու :  
Ընդհանուրին հաւանաթեամբը՝ Բալ Լոնկվալի հան-  
դէ սներուն տնօրէնն ու կարգադրիչն եղաւ :

Պէթինաւ վայրիկեան մը չը վարանեցաւ . Ժան նոր  
իրեն ներկայացուցեր էր Բալ ար Լամբատանար, եւ  
սա ալ հազիւ աւ արտեր էր պարտու պատշաճ մե-  
ծարանքը, որ Պէթինաւ, Արւորին ծուլով՝ ականջն  
ի վար կ'ըսէր .

— Եսսանեւ հինգ երորդք :

Մարկայն լու ընդունելութիւն ըրաւ Բոլին, եւ  
այնքան լու ընդունելութիւն, որ նա, քանի մը որ,

(\*) Անգլիական խազեր .

խարուած մեաց : Կարծեց թէ իր անձնական հրապարաներուն համար էր այս սիրալիքը ու յոյժ մասքան ընդունելութիւնը : Մեծապէս կը սիրալիք : Ժան ներկայացուցեր էր զինքը . Ժանին բարեկամն էր : Պէտինային աչքին այս էր իր բոլոր արժանիքը :

Տիկին Աքօթին գգեակը բաց քաղաք էր . մէկ իրկուան համար հրաւիրուած չ'էին հան հրաւիրեալք , այլ ամեն իրկուան համար . եւ Բոլ , լի եռանդով , ամեն իրկուն գաղու ելեր էր : Իր երազն իրացած էր : Բարինզը կը գտնէր Լոնկվալի մէջ :

Միայն թէ՛ Բոլ ոչ անմիտ էր , ոչ ծանծազամբան (1) : Անստարակոյս , մասնաւոր ուշադրութեանց ու խընամոց ստարկայ եղան էր , օրիորդ Բէռսիվալի կողմէն . կախորժէր նու խօսակցիլ երկարօրէն , խխտ երկարօրէն , մինակուկ իրեն հետ . . . այլ ի՞նչ էր այս խօսակցութեանց՝ այն յատիանական , այն անսպառելի նիւթը . Ժանը , գարձեալ Ժանը , միշտ Ժանը :

Բոլ թէթեւսոլիկ էր , զրօսասէր , նաևրասէր , այլ շուտով կը զգօնանար երբ Ժանին վրայ խօսք ըւլար . զիտէր զայն արժէւորել . զիտէր զայն սիրել : Ոչինչ աւելի քաղցր էր , ոչինչ աւելի զիւրին իրեն համար՝ քոն իր տղայութեան բարեկամին վրայ ինչ աղէկ բան որ կը մտածէր՝ ըսել : Եւ որովհետեւ կը անանէր որ Պէտինա մեծ համոյք կը զգար զինքը մափէլ ընելով , Բոլ բոլոր պերճախօսութիւնը գուրս կը թափէր :

Միայն թէ Բոլ , — եւ ասի իր իրաւոնքն էր , — ողեց , իրկուն մը , իր այս վեհանձնական ընթաց-

(1) Fai. (առջ , բայց (

քին արիստուրին ունենալ։ Քառորդէ մ' ի զեր Պէ-  
թինային հետ խօսակցեր էր։ Խօսակցութիւնն ա-  
ւարտելէն եռքը, գացեր էր ժանը գանձալ, սրա-  
հին միւս ծայրը, ու ըսեր էր անոր։

— Ասպարէզն ինձի թաղուցիր . . . եռ ալ անօն-  
հեր օրիորդ Բէռսիվալին վրայ խոյացայ։

— Իրբեւ զի, առ զո՞ւ սրբոք չէ րիյսու ձեռնար-  
կութեանդ արդիւնքէն։ Ահա աշխարհիս լաւագոյն  
բարեկամներին եղաք ուսուց մարդկան անուններ։

— Այս, անչաւ առ . . . կ'երթայ . . . կ'երթայ . . .  
բայց չերթար։ Օրիորդ Բէռսիվալին աւելի գոզա-  
րիկ ու աւելի սիրառքանչ բան չը կայ։ այլ այս իմ  
ազիկութիւնն է որ չեմ ու բանար եռ զ'այդ, վասն  
զի նայէ, խօսքը մեջերնիս, ծաղրական ու անշահ-  
ղեր մը խաղցել կաւայ կոր ինձի, դեր մը որ  
տարիքիս չը յարենարիր։ Ես սիրարկուներու տարի-  
քին անիմ, ես, ուրիշի սիրոյն խորհրդակիցն ըլ-  
քալու տարիքը չեմ։

— Խորհրդակից։

— Այս, սիրելիս, խորհրդակից։ Ահա իս' սկա-  
տոնս այս տանիք մէջ։ Պահ մ'առաջ մեզի կը նայէ-  
իր . . . Ո՛հ, աչքերս սրատես են . . . Մեզի կը նա-  
յէիր . . . Եյ լս, զիտես ինչ բանի վրայ կը խօ-  
սէինք։ Քու վրադ, սիրելիս, քու վրադ, միայն  
քու վրադ։ Եւ առեն իրկուն մի եւ նոյն բանն է։  
Հարցումներ՝ որոնց վերջը չը գար։ Այէկանեղ մեծ-  
ցած էք։ Երկուքդ ալ արքա Թօնիթանիթէնէն գառ  
առած էք։ Քիչ տանենէն հարիւրապետ պիտի ըլ-  
քայ։ Ետքը։ — Հաղարապետ։ — Ետքը։ — Գնդա-  
պետ, եւ այլն . . . եւ այլն . . . Ահա, ժամկ-

կամիդ իմ ժամ , եթէ ուղեմիր ազգուոր երազ մը տեսնել . . . :

Ժան բարեկացաւ , զայրացաւ գրեթէ : Բօլ շատ զարժմացաւ այս յանեկարծ աղէ ալ գրում ենք :

— Ե՞նչ ունիս : Կարծեմ թէ բան մը չըսի . . . :

— Ներում կը խնդրեմ : Յանեցաւոր եմ . այլ ուռ ալ ինչո՞ւ այդ պիտի արտառոց գաղափարը կ'անցնեն մոռքէ դ . . . :

— Արտառոց . . . : Չեմ տեսնար կըր . . . : Այդ արտառոց գաղափարը՝ ինձի համար ալ ունեցայ :

— Ա՞չ , զու . . . :

— Ի՞նչպէս , ահ , ես . . . : Եթէ ես ունեցայ , զու ալ կրնաս ունենալ . . . : Դու ինչ առելի կ'արժես . . . :

— Բօլ , կը պազառիմ . . . :

Ժանին տագնասին ակներեւ էր :

— Ա՛յ չը խօսինք առոր վրայ . . . ալ չը խօսինք . . . : Վերթառվէս սա ըսել կ'ուղեի , թէ օրիորդ Բէռուսիալ զիս շատ սիրուն կը զանէ , շատ սիրուն , շատ սիրուն . այլ թէ ըսեմ որ լրջօրէն նըկատէ զիս , երրեք լրջօրէն չը պիտի նկատէ զիս , այդ պատճիկ մասներու հին : Ես ալ տիկին Աքօթին վրայ պիտի իյնամ , առանց մեծ վասահութեան . . . : Կը առենաս , Ժան , պիտի զյօննեմ այս տան մէջ , այլ բուն նպաստակիս չը պիտի հասնիմ :

Բօլ աթլին Աքօթին կոզմը դարձաւ . այլ , հետեւ ալ օրէնք խոկ , հոն ալ Ժանին բախւցաւ ու զարժմացաւ . արդ արիւ , Ժան , սկսաւ խօսաւ կանոնապէս՝ տիկին Աքօթին մասնաւոր ակումբին մէջ առեղ բռնել , որ նաև ալ , ճիշտ Գէթինայի նմանի իր վոքը դարպան ունելք : Ժան հոն եկեր կը բրն-

տռէր պաշտպոնութիւն մը , տպաստան մը , տպա-  
ւինելու տեղ մը :

Այն զարհուրելի խօսակցութեան օրը զ'որ ու-  
նեցան առանց սիրոյ ամուսնութեանց վրայ , Պէ-  
թինա , ինքն ալ , այն առաջին անգամ , յանկարծ  
զգացեր էր յինքն այն սիրոյ պէտքը որ կը քնա-  
նայ , այլ ոչ չատ խորունկ , ամեն նորատի աղջկանց  
սրափն մէջ : Զգացօղութեան ազդումը մի եւ նոյնն  
եղեր էր , մի եւ նոյն վայրկենին , թէ՛ ժանին սըր-  
տին եւ թէ՛ Պէթինացին սրափն մէջ : Ժան , սար-  
սափած , խստափոյթ ետ ընկրկեր էր : Ընդհակա-  
ռակը , Պէթինա , իր կատարեալ անմեղութեամբն  
ու միամսութեամբ , թողեր էր ինքզինքը սրափ-  
յուղմանն ու խանդաղատանց բմբոնման :

Սիրոյ կը սպասէր . . . մի սէրն ըլլար այն : Այն  
մարդն որ իր մտածութիւնը , իր կեանքը , իր հո-  
գին պիտի ըլլար , մի նա ինքն ըլլար ժան : Ինչո՞ւ  
չէ : Աւելի լաւ կը ձանչնար զնա՝ քան զ'այն ամեն-  
քը՝ որ տարիէ մ'ի վեր , իր հարստութեան շուրջը  
դարձեր ու դարձեր էին , եւ ինչ որ գիտէր անոր  
նկատմամբ , պարկեցաւ աղջկան մը վատահութիւնն  
ու սէրը քան թէ լքուցանէր :

Վերջապէս , երկուքն ալ լաւ կ'ընէին , երկուքն  
ալ ուարտաւորութեան ու ձշմարտութեան մէջ էին .  
Պէթինա՝ անձնատոր ըլլարով , ժան՝ ընդդիմանա-  
լով . նա՝ վայրկեան մը միտքը չը բերելով ժանին  
նսեմութիւնն ու անընչութիւնը , սա՝ ետ ընկրկե-  
լով միլիօններու վերան առջեւ , ինչպէս ետ պիտի  
ընկրկեր ոճիրի մ'առջեւ . նա՝ մտած ելով թէ իրա-  
ւունք չունէր սիրոյ հետ սիճելու , սա՝ մտած ե-

լով թէ իրաւոնք չ'ունէր պատուոյ հետ զիհնելու :  
Ահա ասոյք համար, բանի Պէթինա կ'անուշնար  
ու սիրոց առաջին հրաւերը լսելով ինքզինքը կու-  
տար անմաններ համարձակ, ահա ասոյք համար՝ Ժան  
օրէ որ այնքան առաւել թխալահծ կ'ըլլար եւ այն-  
քան առաւել աղեկոծ : Միայն սիրելէ չ'էր վախնար :  
սիրուելի կը վախնար :

Պէտք էր որ առաջը նստէր, չ'երթար հոն . . .  
Փորձեր էր, չ'էր յաջողեց . . . Հրաւոյրը կարի զո-  
րաւոր էր ու յազմազ: Առայք կ'երթար . . . Պէ-  
թինա՝ իսկոյն իրեն կուգար, ձեռքերն երկնցու-  
ցած, ժայխալը շրթանցը վրաց՝ սիրուն աղ աչքերուն  
մէջ: Ինչ որ էր ի նա՝ անձնայն ինչ զ'այս կ'ըսէր .  
«Փորձենք սիրել զ'իրար, ու, եթէ կարենանք, սի-  
րենք : »

Ժան կը վախնար: Այն երկու ձեռքերը որ բնող  
առաջ կուգային իր երկու ձեռաց ձնչումն ընդունե-  
լու, ինք հազիւ թէ կը համարձակէր անոնց դպշե-  
լու: Եր ջանար խոյս տալ այն հայուածքէն, որ  
զովար ու ժայխա, անհանգիստ ու հետաքրքիր, իր  
նայուածքը կը քննուէր: Եր դ'ովար Պէթինային հետ  
խօսելու հարկէն, զ'անի լսելու հարկէն: Այն առեն  
ահա՝ Ժան կ'ապաստանէր տուիլին Աքօթին քով, եւ  
այն առեն ահա սիրելին Աքօթ՝ անորու, յուզեալ,  
խօսելու խօսքեր կը լսէր Ժանին րերնէն, որք ի-  
րեն չ'ին ուղղեալ եւ զ'որս ինք սակայն իրեն հա-  
մար կ'առնելի:

Սիրելի չ'էր կրնար չը սխալիլ: Պէթինա չ'էր ըստ  
իրեն՝ այն գեռ տարատա՞մ ու չփոխ զգացու մերը՝  
որք զ'ինքը կ'ալի կոծ էին: Կը պահէր ու կը փայտա-

յէր իր նորածին սիրոյն գալունիքը , որպէս ազահ  
մը կը պահէ ու կը փայտայէ իր գանձին առաջին  
ուկիները . . . : Այն օրն ուր իր սրբին մէջ յստակ  
տեսնէր , այն օրն ուր ապահով թլլոր սիրելուն ,  
ախ , ինչպէս պիտի խօսէր այն օրը , եւ ինչ եր-  
ջանիկ պիտի թլլոր ամեն բան Սիւզիին բախտվ . . .

Հուսկ ուրեմն ամիկին Սքօթ իր անձին վերընծա-  
յէր էր ժանին այս մելամազձութեան պատճառը ,  
որ օրէ օր՝ առաւել յայտնի կերպարանք մը կ'առ-  
նէր : Այս բանս կը փաղաքչէր զինքը . — Երբէք կր-  
նօջ մը անհաճայ չ'է ինքզինքը սիրուած կարծել ,  
ուստի եւ փաղաքչեալ թէպէտ , այլ միանդամայն  
ցաւ կը զգար : Մեծ յարգանք , մեծ ազապատանք  
ունէր ժանին վրայ . կը վշտանար մտածելով որ , ե-  
թէ տխուր ու թշուառ էր նա , իր պատճառաւն էր :

Այս ալ զիտէր Սիւզի թէ անմեզ էր ինք : Ու-  
րիներու հետ երրիմն շփոցեր ոչշրեր էր , շատ պրշ-  
րեր էր : Տիչ մը շարչարել զ'անոնք մեծ ոճիր մըն  
էր : Բան գործ չ'ունեին անսնք , բանի մը պիտանի  
չ'եին . իր ոլքանքն անոնց զրազմոնք մը կ'ըլլար  
ու միանդամայն ինք ալ կը զուարձանար . ատանկով  
անոնք ալ ժամանեակ կ'անցընիին ինք ալ . . . : Այլ  
երբէք ոլքրանուչի կ'երազ չ'էր առած ժանին հետ :  
Գիտէր ժանին արք անիքն ու գերազանցութիւնը .  
միւնեւրէն առելի կ'արքէր նա . նա այնպիսի մարդ  
էր որ իրաւցին կը շարչարի իր սիրովը , և ահա  
զայս չ'էր ուզեր ամիկին Սքօթ : Ուստի արդէն ,  
երիսու երեք անգամ , քիչ էր մնացեր որ խօ-  
սէր եւ զգուշացնէր քաղցրութեամբ , ազապատա-  
նոք , այլ յարհրդած էր էր . . . : Ահա ժան պիտի

մեկնէր քսան օրուան համար . իր դարձին , եթէ դարձեալ հարկաւոր ըլլար , այն առեն քիչ մը բարոյական կը քարոզէր իրեն և այն կերպ կը վարուէր հետք որ սէրը չը գայ խենի խելոք իրենց բարեկամութեան մէջ մտնայ :

Արդ՝ ժան հետեւեալ օրը մեկնեցաւ . . . . Պէթինա՝ բոլոր զօրութեամբը սկզբ եր էր որ այս վերջին օրը գայ ի լոնկիտլ տնյնէ , եւ իրկունն ալ դժուեակը ձաշէ : Ժան մերժէր էր , պատճառելով թէ՝ զբազմունքներ կ'ունենայ երթաղուն առջի օրը : Գիշերը՝ ժամը տասնուկէսին մօտ հասաւ ի դղեակուոք եկեր էր . քանի քանի անդամներ , ձամբուն վրայ , եւս գառնալու եզեր էր :

— Եթէ քաջութիւն ունենայի , կ'ըսէր ինքնիրեն , չ'ի տեսներ նորին զինքը : Կ'երթամ վազը ու ալ չ'եմ գառնար ի Սուզինեի , քանի որ նա հոն ըլլայ . . . . Այսպէս որոշած եմ ու քաջ որոշած :

Սակայն շարունակեց իր ձամբան . կ'ու զէր նորին տեսնալ զ'անի . . . վերջին անդամն ան համար :

Մրահէն ներս մտնելուն սկսու , Պէթինա դէմը վազեց . . . .

— Եկա՞ք , վերջապէս . . . . Մրգան ու :

— Շատ զրազեալ էի :

— Կ'երթամ վազը :

— Այս , վազը :

— Կանոնիս :

— Առաւ օտեան ժամը հինգին :

— Այս ձամբէն սլատի երթամը որ դարսատանին պատն ի վեր կ'երկարի ու ազա գիւղին մէջն կ'անցնի :

— Այս, ձիւա այն ճամբէն պիտի երթանք :

— Խնչո՞ւ այդքան կանուխ կ'երթաք : Քիչ մը ուշ  
ըլլար նէ՛ զ արտասիմն վրայէն կուզ այս ձեզ ահա-  
նել ու երթաք բարով բռնէլ :

Պէթինա՞ իր ձեռքին մէջ բռներ ու պահեր էր  
Ժանին ձեռքը որ կ'այրէր : Ժան ձիզ մը բրաւ ու  
խրշխալով ազատեց ձեռքը :

— Հարի է որ, ըստու, երթաւ ձեր քոյլը բարե-  
ւես :

— Մէկ պահէն... չը տեսու ձեզ... տասը հո-  
գի կոյ շուրջը... Եկէք նաևեցէք քիչ մը, հոս,  
իմ քովս :

Պարտաւորեցաւ նատիւ քովը :

— Մենք ալ, ըստու Պէթինա, մենք ալ պիտի եր-  
թանք :

— Դուք :

— Այս, ժամ մը կոյ, քեռարօնմէս հեռագիր մը  
սաւցանք որ մեզի շատ մեծ ուրախութիւն պատ-  
ճառեց : Ամենէ մը պիտի գար, տասներկու օրէն  
կուզ այ կոր . վաղը չէ միւս առաւտ նիւ-Եօրքէն  
նու կը նատի Լապուասորի վրայ... : Համբը պիտի  
երթանք սպասել զինքը... : Լազը չէ միւս որ պի-  
տի երթանք : Տզաքն ալ հետ կը տանինք : Օդտա-  
կար կ'ըլլայ իրենց տասն օրի շաբ ծովոն եզերքը  
անցրինել... : Մրգան գուշ պիտի թլյայ քեռարս երբ  
ձեզ հանչեայ : Երբ ձեզ հանչեայ... : Կը հանչեայ  
արդէն : Չեր վրայ խոռոչանք իրեն՝ մեր տանին նա-  
մակնայ մէջ : Ասրահով եմ որ խիստ լաւ պիտի յար-  
մարիք իրաբու : Շնամիք անձ մըն է... : Մրգան ա-  
ռան պիտի մնաք հոն :

— Քառն օր :

— Քառն օր . . . բանակի մը մէջ :

— Այս , օրիորդ , Աէռքօթի բանակը :

— Օսլանի անտառին մէջ տեղը : Զեր կնքահօր բացատրել առի զայդ այս առաւօտ : Առողիւ նրանիկ եմ քեռ այրս դիմաւորելու երթ ազաւ , բայց միանգ ամսայն կը ցաւիմ մեկնելուս . . ապա թէ ոչ , ամենն առաւօտ փոքրիկ այցելութիւն մը կ'ընէի ձեր կնքահօրը . . . : Զեր զրայ լուր կ'առնելի իրմի , կուզէք տասը օրէն քրօն փոքրիկ նամակ մը դրել շնոր առզուվ , — շատ ժամանակի կորուսու մը շըլլար ձեզի . — խմացնելու համար թէ ինչպէս էք եւ թէ մեզ չէք մոռնար :

— Ո՞հ , ձեզ մոռնազ . . . ձեր խնամոց , ձեր բարութեան յիշատակը կորանցունել . . . երրէք , օրիորդ , երրէք :

Զայնը կը դոզդոֆէր : Վախցաւ իր յուզմունքէն . Բարի ելաւ . . . :

— Ճշմարիտ , օրիորդ , հարկ է որ երթամ ձեր քոյրը բարեւեմ . . . : Ինծի կը նայի կոր . . . : Պէտք է զարմացած , ըլլայ . . . :

Սրահին մէկ կողմէն միւսը անցու : Պէթինա եւ առւելն կը նայէր : Տիկին Նորթօն դաշնակին առջեւ անզաւորուեցաւ՝ քիչ մը պարել տալու համար երիտասարդները : Բոլ ար Լավառտանս օրիորդ Բէստիվալ ին մանեցաւ :

— Եռուզէք զիս պատուել , օրիորդ . . . :

— Տէր Աստուած , պատախանեց , կործեմ թէ հիմա պարոն Ժանին խօսացայ :

— Եւրքապէս , եթէ անի շըլլայ . . . ևս կ'ըլլամ :

— Շատ լու :

Պէթինա դէպ ի Ժանին գնաց , որ տիկին Աքօթին  
քով եղեր նստեր էր :

— Մեծ կակ սուս մը շինեցի , բայս , Պ - որ Լա-  
մատանա զիս պարի հրաժրեց , ևս ու պատա-  
խանեցի թէ՝ ձեզի խօսացեր էի այս վալսք :

Այս կը հաճիք , այնպէս չէ :

Զանի իր բազկացը մէջ բանել , անոր մազերուն  
բայրը չնշել . . . : Ժան զինքն ու ժաթափ կը զգար :

Զը համորձակեցաւ ընդունիլ :

— Կը ցաւիմ , օրիորդ : Զեմ կրնար . . . անհան-  
գիստ եմ այս իրկուն : Հոռ գալն եկայ , որպէս զի  
շը մեկնիմ առանց հրաժեշտի ողջոցն առլու ձեզի ,  
այլ պարել , չէ : չեմ կրնար :

Տիկն Նոնթօն վալսին դեզանը կը սկսէր զար-  
նել :

— Ե՞յ լու , բայս Բոլ , մասենազով զուարթերէս ,  
բնքն է , օրիորդ , թէ չէ ես :

— Դուք , բայս տիրոթեամբ , առանց աշքերը  
Ժանին երեսէն վար առնելու :

Պէթինա կարի խոռվեալ էր եւ զայս պատաս-  
խանեց առանց շատ զիտնալու թէ ինչ կ'ըսէր : Աե-  
միթապէս զղջաց ընդունած բլլաղուն : Կողէր հոն  
համիլ , անոր մատ . . . : Այլ շատ ուշ էր : Բոլ ձեռ-  
քէն բանեց , եւ քաշերով տարաւ :

Ժան ոտքի ելեր էր : Երկուքին կը նայէր : Ամազ  
մը անցաւ աշացն առջեւէն : Անողօքարար կը չար-  
ջարուէր :

— Բան մը միայն ունիմ ընելիք , կ'ըսէր ինքնի-  
քեն , այս վալսէն օգուտ քաղելու մեկնիլ . . . : Աազն

առաջ առ քանի մը առող կը գրեմ ավելին Աքօթին  
ներում ինդրելու համար . . . և յասա ու զան) —

Սբահին դուռը հաստա . . . Ալ չ'ըր նայէր Գէ-  
թինային . . . Եթէ նայած ըլլար . կը մնար .

Այլ Գէթինա կը նայէր իրեն , եւ յանելարձ ըստ  
Բոլին .

— Շատ շնորհակաց եմ , պարուն բայց քիչ մը  
յոցնած եմ . . . կանկ առնենք , կ աղախեմու . . կը  
ներէք ինձ այնպէս չ'է . . . իսկամ քանիզ  
Բոլ թեւն երկնցուց :

— Ո՛չ , շնորհակաց եմ , ըստա առ ինչ պատճ  
Դուռն այն միջոցին քայլուեցաւ . . Ժամապահն  
չ'էր : Գէթինա վազերով սրահին անցու գնաց : Բոլ  
մնաց առանձին , յոյժ զարմացած , չը հասկելով  
թաւ թէ ինչ կը դառնար :

Ժամ ապօգէն սանդուղին գլուխն էր , երբ լուց  
Թէ զինքը կը կանչենաւ և առաջաւ առ ազգ

— Պարոն Ժամն , պարոն Ժամն : այ ո՞ւ համբարձ  
կանկ առաջ , Ետին դարձու : Գէթինան քննի էր :

— Կը մեկնիք . . . առանց ինձի մնաս բարով քա-  
լուն :

— Ներում կը ինդրելու , շատ յոցնած եմ :

— Եթէ յոցնած էր , այսպէս ոսրազ մի երթոք :  
Օդն սպառնալից է :

Զեռքը դուրս երկնցուց :

— Տեսէք , կանձրեւէ արդէն և այս ձնուն ոչն

— Ո՞հ , հազիւ :

— Եկէք զամաթ մը թէ առէք միոց սրահին  
մէջ , միայնակ ինձի կերտ , ու ապա կառքազ կը զդր-  
կեմ ձեզ :

Եւ ։ սահմացներէն մէկուն դ առնեալով։

— Ըսէք որ քուրէ մը լեն շուտով։

— Զէ ։ օրիորդ ։ կ'ազաշեմ Օդ առնելը աղէկ սիսի գայ ինձի ։ ։ քաղերու ալէտք ունիմ ։ ։ ։ թու զէք որ երթամ։

— Գացէք ուրեմն ։ ։ ։ Տայց կրկնոց չ'ունիք ։ ։ ։ կրկնակ (1) մ' առէք պատսպարուելու համար։

— Ես չ'եմ մսիր ։ ։ մինչդեռ դ ուք ։ ։ այդ բաց չրժազգեաւով ։ ։ ։ Ես երթամ որպէս զի դ ուք ալ ներս մանաք։

Առանց խոկ ձեռք տազու ։ խոյս տուաւ եւ արագ արագ սանդուզին տաքերէն վար իջաւ ։

— Եթէ ձեռքին դաշիմ ։ կ'ըսէք ինքնիրեն ։ բան ընծած է ։ գաղտնիքս դուրս կ'ելլայ ։

Գաղտնիքը ։ Զը գիտէք թէ Պէթինս իր սրտին մէջ կը կարգաբ որպէս բաց գրքի մը մէջ ։

Երբ Ժան սանդուզին ստորաբ հասաւ ։ խոն վայրկեան մը վարանեցաւ ։

Առ խօսքն իր չրթանցը վրայ էր ։

« Կը սիրեմ զմեզ ։ կը պաշտեմ զմեզ ։ Ահա սասր համար ալ ձեզ տեսնել չ'եմ ու զեր ։ »

Այլ ։ այս խօսքը ։ ։ ։ արտասանէք ։ կը հեռանայ ։ ընդ հուզ գիշերուան մութին մէջ անյայտ կ'ըլլայ ։ ։ ։ Պէթինս հոն կը մնայ ։ սանդուզին դլուխը ։ գրան դուսափայլ շրջանակին մէջ ։ Անձրեւի խոշոր կաթիլներ ։ հովին մզուած ։ կուգան զարնել ։ իր մերկ ուսերուն ու կը գոզացնեն զինքը ։ բանի անզ չը դւեէք ։ իր սրտին տրուիիւնը կը լսէ սրու կերպով ։

— Գիտէի որ նա զիս կը սիրէք ։ կ'ըսէք իւրովի ։

(1) Châle. (—շալ—յաշ). Հուլ

իսկ այժմ ստուգին դիմումը որ ես ալ . . . ահ . . .  
ես ալ . . .

Յանկարծ գրան ստուգը հայելեաց մէկուն մէջ,  
երկու սանկայից ցուքը կը տեսնայ որք , անշարժ ,  
ոտքի վրայ կը կենան , ներքեազաւթին կաղնիէ սե-  
զանին քով : Պէթինա քանի մը քայլ կ'առնէ գէպ  
ի սրահը . . . ինդ ալու ձայներ կը լսէ ու վալսն որ  
կը չարունակէ , կանկ կ'առնէ . Մինակ ըլլալ կ'ու-  
զէ , միս մինակ , եւ , ծառայներէն մէկուն ուզգե-  
րով .

— Գացէք աթլինին բուքը որ յոզնած էի , սեն-  
եակա ելոյ :

Անին , իր նամիւտը , կը մրափէր թիկնամթոխ մը  
վրայ : Կը ճամբէ զ'անի . . . ինքն իրեն այխաբ հան-  
ուի : Բազմոցի մը վրայ կ'ինայ : Տեկում մը կը  
զգայ , բեկում գրգռալի :

Սենեակին գուռը կը բացուի : Տիկին Սքօթն է ,  
— Տկա՞ր էք , Պէթինա :

— Ա՛հ , Սիւզի , զ ու ք էք , Սիւզիդ իմ : Ի՞նչ ազէկ  
խելք բրիք սենեակս եկաք . . . Նստեցէք քովս ,  
քովիս նստեցէք :

Տզու մը սլէս քրօֆը թեւերուն մէջ կծկեցաւ , իր  
հրաժարա գլխավը զ զ ու ելով Ախզին զովազին ու-  
սերը , սպա , յանկարծ , հեծ կլսուք մըն է փրցուց ,  
այնպիսի թառանշներով որ կը խզգէին , կը մզձկէ-  
ին զինքը :

— Պէթինա , սիրեցեալդ իմ , ի՞նչ ունիք :

— Ոչինչ , ոչինչ . . . լզերէս է . . . ուրախութիւ-  
նէս է :

— Ուրախութիւն :

— Այս . . . այս . . . կեցէք . . . բայց թողէք որ լամ  
քիչ մը : Այնքան ազէկ կուգայ լաւք . . . Այլ մա-  
հաւանդ մի վախնաք . . . մի վախնաք :

Քրօջը համբոցիներուն ներքեւ, Գէթինա կը խա-  
զաղի, կը հանդարտի :

— Լինցու, լինցու, եւ պիտի քսեմ ձեզի . . .  
Ժանին վրայ պիտի խօսիմ ձեզի հետ :

— Ժան, ժան կը կոշէք զինքը :

— Այս, ժան կը կոշեմ . . . Զը նշարեցիք, ա-  
տենէ մի վեր, ինչպէս ախուրէր էր եւ ինչպէս թը-  
րառ կ'երեւնոր :

— Այս, արդարեւ :

— Կուգար . . . անմիջապէս կ'երթար ձեր քովը  
կը տեղաւորուէր ու հոն կը մնար, մասզբաղ, լոիկ,  
այն աստիճան որ, ընդ բազում օրեր, հարցուցի ես  
ինծի, — ներեցէք որ այսպէս սրտարաց ամսն բան  
կ'ըսեմ, սպարութիւնս է, գիտէք, — հարցուցի ես  
ինծի թէ, զձեզ արդեօք կը սիրէր, Այս զիդ իմ:  
Այնքան սիրառանչ էք, եւ ասի այնչափ բնական  
կ'ըլլար: Այլ ոչ, զձեզ չ'էր, զիս էր:

— Զեզ :

— Այս, զիս: Լու մարկ ըրէք . . . Հազիւ կը  
համարձակէր ինծի նայելու: Խոյս կուտար, կը  
վախչէր ինէ . . . Յայտնապէս կը վախնար ինէ: Եյ  
ըստ, արդարն ըսենք, սոսկալի՞ եմ ես: Ոչ, այն-  
պէս չ'է:

— Սոսոգիւ ոչ:

— Ահ, զի չէ թէ ինէ կը վախնար, այլ իմ ստո-  
կէս, իմ աշուելի ստոկէս: Այս ստոկը որ ամենքը  
իրեն կը քաշէ այն միւսները, եւ այնքան ստոտիկ

կը հրասագութէ զիրենք, այս առանգը կը պակռոցանէ զնա, եւ կը յուստհասեցնէ . . . վասն զի նու ուրիշներուն որէս չ'է նու, վասն զի . . .

— Սիրեցեալդ իմ, զդոյւ կացէք, կը սիսուլիք թերեւս . . .

— Ո՛հ, ո՛չ, ո՛չ, չ'եմ սիսալիք : Պահ մ' առաջ, սանդուղին վրայ, երբ կը մեկնէր, քանի մը խօսք ըստ ինձի : Այս խօսքերը վահա քաներ էին . . . այլ եթէ տեսնայիք իր վրդովումը, թէեւ ամեն ջանք կ'ընէր ինքզինքը բանելու համար . . . Սիւզի, Սիւզիդ իմ, յանուն ձեր վրայ ունեցած խանդաղաւացու, եւ Աստուած գիտէ ինչ կաթուղին սիրով կը սիրեմ ձեզ, առասիկ իմ համոզումն, իմ բացարձակ համոզումն . եթէ ժողովակ օրինորդ թէուիր վալ ըլլարու, հէք վարքիկ աղջիկ մ' ըլլայի պատահ ստակի, պահ մ' առաջ Ժան ձեռքէս բռնած : Եւ ինձ ըստ կ'ըլլար թէ կը սիրէ զիս, եւ, եթէ այս որէս խօսած ըլլար ինձի, դիտէք ի՞նչ պատասխանած կ'ըլլայի իրեն :

— Թէ դուք ալ զինքը կը սիրէք :

— Այն, եւ աշու ասոր համար այսքան երջանիկ եմ : Անցեղլի գաղափար մընէ սա մաքիս մէջ, որ սպաշտեմ այն մարդը որ իմ ամեն սինս պիտի ըլլայ . . . Լաւ ուրեմն, չ'եմ բուեր թէ կը սպաշտեմ Ժանիք, ո՛չ, տակաւին ո՛չ . . . այլ աշա կը սկսի, Սիւզի . . . եւ այնքան անուշ կը սկսի :

— Գէթինա, անհամոզիստ եմ ձեզ այս բորբոքման մէջ առանելուս : Լաւ գիտեմ թէ Գ. Ռէյնո շատ ապագատանք ունի ձեզի համար . . .

— Ո՛հ, անկէ առելի, անկէ առելի :

— Եսաւ աէք , եթէ կը ողէք : Այս , իրաւունք ունիք , զաւ հասկցեր էք . . . . կը սիրէ զձեզ . . . եւ միթէ արժանի չ'էք : սիրեցեալդ իմ , այն բոլոր սիրոյն որով սիրեն զձեզ : Խոկ Ժանին զալով , — քենէ ինծի կը պլշկի այդ աներկրայ , ահա , ես ալ , ժան կը կոչեմ , — Եյ լաւ , զիտէք ինչ կը մոտածեմ եր վրայ : Ամիսէ մ'ի վեր , շատ անգամ երկուքու այ առիթ ունեցանք իրաբու ըստելու . . . : Շատ բարձր հասկացմանք ունիմ իր վրայ , շատ բարձր . . . : Այս այսու անենայնիւ , ձեզի յարմարելու ամուսիննեւ արդեօք :

— Այս , եթէ կը սիրեմ : Եսաւով ան պատճառ կը խոսք կը փորձեմ ըստ ձեզի եւ զուք միշտ կը խոսիք . . . . Ես , Պէթինա , փորձառութիւն մ'ունիմ զոր զուք չ'էք կրնար ունենալ . . . . Լաւ հասկցէք զիս . . . . Բարիդ հասանք յը հասանք , յոյժ վառ վունք , վայրուն , ազնուական բնելերութեան մը մէջ մասնեք . . . . Դուք արդէն կրնայիք , եթէ ուզէք , մարքիզուհի կամ իշխանուհի բլլալ . . . :

— Այս , բայց չ'ու զեցի :

— Հոգ երնիդ չ'է ամենեւին : Եթէ տիկին Ռէյնո կոշուիք :

— Ամենեւին ոչ , եթէ կը սիրեմ . . . .

— Ահ , նորէն նորէն մի եւ նոյն բանը . . . .

— Զի այն է րուն խոր իրոք : Աւրիւ չը կայ . . . . Էւ ես ալ իմ կարգիս՝ կ'ու զեմ խռհական ըլլալ : Այս խռդիրը՝ կը հաւանիմ թէ բոլորովին լուծեալ չ'է , եւ թէ կարելի է որ քիչ մը շատ շուտ բանեցայ : Կը աեսնէք ինչպէս խռհական եմ : Ժան վազը կը մեկնի : Քանի օրէն միայն սիրու վերստին ահանում

զինքը։ Այս բանն օրուան միջոցը, ժամանակ պիտի ունենամ ինքզինքս հարցաքննելու, ողջ ընձեռնելու, վերջապէս, աղեկ մը զիտեալու թէ ինչ կանցնի զիս։ Թուացիկ կերպեր ունիմ, բայց լուրջ եւ զգոն եմ...։ Երնդոնիք որ այսպէս է։

— Այս, կընդունիմ։

— Լան որեմն, սա կ'ազաշեմ ձեզի ինչորէս պիտի ազաշէի մեր մօրը, եթէ ողջ ըլլար։ Եթէ քսան օրէն ըսեմ ձեզի։ Այսպի, սպահով եմ որ կը սիրեմ զինքը։ Կը ներկք ինձ երթալ իրեն ևս ինքս առանձին, ու հարցնել թէ՝ կ'ուզէ զիս իրեն կին։ Դուք ալ այսպէս բրիք Ռիշարին հետ...։ Ըսէք, Այսպի, թոյլ պիտի տաճք այն, առեն։

— Այս, պիտի տամ։

Պէտին գրկեց համբուրեց քոյրը ու ականջն ի վար սա երեք բառերը փախուց։

— Շնորհակալ եմ, մայրիկ։

— Մայրիկ, մայրիկ։ Այսու կը կոչեիք զիս, երբ տղայ էիք, երբ մինակ էինք երկուքնիս աշխարհի վրայ, երբ ձեզ կը հանուեցնէի իրկունք, ի նիւ-Եօրք, մեր անշուք սենեկին մէջ, երբ ձեզ բազկացն մէջ կ'առնէէի, երբ երդեր կ'երդէի ձեզ քննոցներու համար։ Եւ, այն ժամանակին ի վեր, Պէտին, մէկ բազմանք մ'ունեցայ աշխարհի վրայ։ Ճեր երջանելութիւնը։ Ասոր համար կը խնդրեմ ձենէ որ լու մոտենէք։ Այս պատասխանէք ինձիւ... ողջ չը խռախինք ասոր վրայ։ Կ'ուզեմ որ ձեզ թողում հանդարտ, անդ որիթիկ։ Աննին ձամբեր էք քովիրնուզ...։ Կ'ուզէք որ, այս իրկուն դարձեալ, ձեր պզարկ մայ-

րիկն ըլլամ, ձեզ հանուեցեմ, պառկեցնեմ, ինչ-  
պէս երբեմն :

— Այս, կուզեմ:

— Իսկ, երբ պառկիք, կը խօսաւանք ինծի խո-  
հական ըլլալ:

— Կոհական պատկերի նման:

— Ամեն ջանք պիտի ընէք որ քեանոք:

— Ամեն ջանք:

— Եւնք շնորք, բանի մը չը մոռածելով:

— Եւնք շնորք, բանի մը չը մոռածելով:

— Շատ լաւ:

Տար փայրիկան վերջը, Պէթինային գողորիկ  
գլուխը հեղիկ անուշիկ կը հանդժեր բանուածքնե-  
րու եւ ժանեակներու մէջ: Սիւզի կ'ըսէր իր քրօջ:

— Ես փար կ'ըրթամ այս մարդիկը գտնալ որոնք  
շատ աերբալի են ինձ այս իրկուն: Սենեակս չը  
մոռած, պիտի գամ նայիլ թէ՝ կը քնանաք: Մի խօ-  
սիք . . . : Բնացիք:

Դուրս ելու: Պէթինա առանձին մնաց և կուզը  
քննեց: Ամեն ճիզ թափեց քեանուալու համար: Կի-  
սով շամի յաջողեցւ: Քնէած, թմրած, անուրջի եւ  
իրականութեան մէջ ծածանեալ մնաց: Խօսացեր  
եր բանի մը չը մոռածել եւ անկայն անոր վրայ կը  
մոռածէր, միւս անոր, միայն անոր, ոյլ տարածամ  
խառնացիստ: Որքան առեն անցաւ այսպէս, կա-  
րող պիտի չ'ըլլար ըսել: Ծանկարն, իրեն թուեցու  
թէ կը քալեն սենեակին մէջ: աշքերը կէս մը բա-  
ցաւ եւ կարծեց քոյրը տեսնալ: Քանդ գլուխը  
ըստ մէկէն:

— Դիմէք, կը պիտեմ զինքը:

— Այս անգամ քեզացք, քեզացք ու առնելու ձայն  
— կը քետեսմ... կը քետեսմ:  
Այս անգամ սպազիւ քեզացք սակայն սովորա-  
կանէն նուազ խորունկ, զի, առաւ օտեան ժամը  
շորսին սենեները, թրնդիւն մը արթեցուց զինքն  
ընդուատ, որն որ որ մը առաջ, չը սպատի վրադովէր  
բնաւ իր քունը: Անձրեւ կը տեղար, հեղեղանման,  
և Պէթինայի սենեակին երկու մեծ պատուհաննե-  
րուն կուգար կը զարնէր:

— Ո՞չ, աս անձրեւը, կըսէ միտն ի վար: Թրջի  
սպատի:

Այս եզաւ իր առաջին մասեւթիւնը: Ուսքի  
կ'ելնէ, բռայիկ ուսքով սենեակին մէջէն կ'անցնի,  
վերդի մը կը բանայ: Լոյոր ծագեր էր, մոխրագոյն,  
պղասոր, թանձր: Երկինքը ջուրով էր լցուած: Հո-  
գը կը փշէր փաթորկացոյզ, և, փուքերով, փոթո-  
րուն կը դարձնէր անձրեւը սպատոքելով:

Պէթինա աղ չը պառկիր վերստին: Կը զդայ թէ  
անեկարելի սպատի ըլլայ իրեն նորէն քետեսլ: Վե-  
րարկ (1) մը կ'առնէ վրան ու պատուհանին սովու-  
ր կը կենայ, անձրեւին կը նայի: Որովհետեւ անպատ-  
ճառ սպատի երթար նա, կ'ուզէր որ գոնէ բաց ո-  
գով երթար պայծառ արեւով որ լուսազարդէր իր  
սուտին իթեւանը:

Ամբա մը առաջ, ի լոնկիալ եկած առենը, Պէ-  
թինա չ'էր գիտէր թէ ինչ էր իթեւան մը: Այսօր  
գիտէ: Զինուորական իթեւան մը եռաւ նէն քառ-  
սուն հազարամեթր արշաւան մընէ է, մէկ ժամու-  
գ առգարով՝ նախառն աշելու: Համար: Քօնսթանիէն

(1) Peignoir.

արտան սորմեցու ց պ' այս իրեն - առ առ օտնելորբ ազ-  
քասներու տուները պատճառած ժամանեակին, Պէ-  
թինա հարցու մներավ կը խրալը երևը դիմուորա-  
կան բաներու վրայ և մասնաւորապէտ հրեանեան  
րաց պատահարկութեանը վրայ : ոչ ան առա մարդու

Աւել կամ տասը ժամանիս այս ողողուն, անձրե-  
ին, տակ, թէ զաման Փան : Պէթինա կը մասմէիր որ  
թիւռնէր պատահին, Նառած ան պատահին, Տոյ որ  
Լավառ տանոսը շատ հանգիստ պիտի քնանան մինչեւ  
առա օտեան, ժամբ տասը, մինչդեռ Փան այս ջրը-  
հեղեղը վրան պիտի ընդունի :

Եօլ ար Լավառ տանս - այս անոնը իր մոռքին մէջ  
յիշառակի մը կը զարթուցանէ որ տաժ անելի է ի-  
րեն, աս առ ջի իրկառան վարսին յիշառակը . . . : Ել-  
լազ պարել երբ ժամփե վիրար յայտ յանցիսան կե-  
րեւնար : Այդ վաղսի ըրջանը Պէթինային աչքին իր-  
բեր ոչիր մը կ'երեւնաց . տակալի բան է այս ըրածը :

Եւ ապա այն չէ մի որ չը կրցաւ ըլլար քաջ ո-  
պատարաց, Ժանին հետ ունեցած այս վերջին խո-  
սակցութեանը մէջ : Եւս, չէր կրնար, չէր հասնար-  
ձակէր բան մը բանը, այլ ինը պէտք էր որ առելի  
խանց ակաբեթ ու առելի պրատակը ըլլար : Տիսուր եռ  
տառ ապամուլ որպէս էր նու, երբէք պէտք չէր նե-  
րեր որ հետիւնն երթայ : Պէտք էր կեցներ, ինչ որ  
ըլլար կեցներ : Պէթինային երեւակցութիւնը կը  
բանի ու կը բարբարիս Անուշտ ժամե այս տաղաւո-  
րութիւնն հետը տարած էր, թէ ինը յանի այս  
բան մըն է, անսիրու եւ անց ութ :

Եւ կէ ո ժամեն, պիտի մէկնի, մեկնի քառեւ օր-  
ուան համար . . . Ա՞հ, եթէ կարենար որ եւ է մի-

Հոցաւ . . . . Այլ այդ միջոցը , կայ . . . . Զօրագունդը  
դարաստանին պատին երկայնութեամբը պիտի անց-  
նի , դարտափին ներքեւէն : Եւ ահա Պէթինա մո-  
լեզին տենչ մը կը զգայ որ երթայ ժանին անցնի-  
ւը տեսնայ : Ժանն որ զինքը հոն տեսնայ այն ժա-  
մուն՝ պիտի հասկնայ թէ ներում խնդրել եկած է;  
առջի օրն ըրած անգթութեանցը համար Այլ ,  
պիտի երթայ . . . . Բայց Սիւզիին խոստացաւ որ  
պատկերի նման խոհական ըլլայ , եւ երթայ նէ՝  
պատկերի նման խոհական եղած կ'ըլլայ մի : Ան-  
դաստապարտ ըլլալու համար հերիք է որ Սիւզիին  
խոստովանի ամեն բան , երբ ներս մանայ , եւ Սիւ-  
զին կը ներէ :

Պիտի երթայ , պիտի երթայ : Միայն թէ՝ ի՞նչպէս  
հագուի : Ձեռքին տակ մէկ շրջազդեստ ունի պա-  
րահանդէսի , վերարկ մը բեհեզեայ , պձեղնակ պրզ-  
տիկ շփշփներ (<sup>1</sup>) եւ կապոյտ անդուսէ մուճակներ (<sup>2</sup>)  
պարահանդէսի համար : Նաժիշտը արթնցնել , ըլլա-  
լու բան չ'է . . . . ատենն ալ կ'անցնի . . . . հինգին քա-  
ռորդ կայ : Զօրագունդը ժամը հինգին կը մեկնի :

Բեհեզեայ : Վերարկով եւ մնդուսէ մուճակներով  
կրնայ գործին մէջն ելլալ . դաւթին մէջ կը գըտ-  
նայ անշուշտ գլխարկ մը , իր պարտէղի վոքրիկ  
մնցերը (<sup>3</sup>) եւ սկսվուեան մեծ կրկնոցը զ'որ կը հագ-  
նի կառք վարելու համար , անձրեւ եղած օրերը :  
Անհատնում զգուշութիւններով դուռը կէս մը կը  
բանայ : ամենայն ինչ կը քնանայ դզետկին մէջ ,  
պատերուն քովին կը սահի , փողերուն (<sup>4</sup>) մէջն .  
անդուղէն վար կ'իմայ :

(<sup>1</sup>) Mules à talons. (<sup>2</sup>) Soulier. (<sup>3</sup>) Sabot. (<sup>4</sup>) Couloir.  
(հայթապահ)

Միայն թէ փոքրիկ մոցկերը հօն ըլլային, իրենց  
տեղը: Այս է իր մեծ մտահագութիւնը: Աւասիկ  
հօն են: Պարահանդէ այս մուհակիներուն վրայ կը  
կազկցէ զ'անոնք, մեծ կրկնոցին մէջ կը փաթթուի:  
Դուրսը՝ անձրեւը կը լսէ, որ կրկնառպատճիկ սաստ-  
կութեամբ կը տեղայ: Նախասենեակիներու ահագին  
հովանոց մը կը տեսնայ զ'ար ոտնկայները կը գոր-  
ծածեն երբ կառքին գահակին վրայ նստին. կ'առ-  
նէ զ'այն: ալ պատրաստէ ... այլ, երբ կ'ուզէ զուրս  
ելնել, կը տեսնէ որ գաւթին պատուհան-զ ոնակը  
երկաթէ հաստ ձողով մը զոցուած է: Զ'այն վեր-  
ցնել կը ջանայ, այլ երկաթէ ձողը հաստատ կը մը-  
նայ, գէմ կուտայ, եւ գաւթին մեծ ժամացոյցը  
զանդաղ դանդաղ հինգ կը զարնէ: Կը մեկնի նա  
այս վայրկենին:

Կ'ուզէ տեսնել, կ'ուզէ տեսնել: Ասծեւն երած  
արգելքներէն կը գրգռի կը կամսումի: Մեծ ճիգ մը  
կ'ընէ: Չողը տեղի կուտայ, վար կը ասէի ...: Այլ  
ահա Պէթինային ձեռքին վրայ երկար ճեղք մը  
բացուեր է ընդ որ արեան բարակ մազմզուկ մը  
կը տեսնուի: Պէթինա թաշկինակը ձեռքին շուրջը  
կը պատէ: մեծ հովանոցը կառնէ, բանալին կը զ-  
պանքին մէջ կը գարձնէ, զուռը կը բանայ: Վեր-  
ջապէս: դ'ուրս երաւ ահա:

Օդը սարսափելի է: Հովէ ու անձրեւը կը կոր-  
ծանին: Հինգ կամ վեց վայրկեան ալէտք է փողո-  
ցին վրայ նայօգ դարսափին հասնելու համար: Պէ-  
թինա սուած կը նետուի զատէ պինդ, զլախելոր, իր  
ստուար հովանոցին տակ ծածկուած: Ցիսուն քայ-  
լի շամի տոած է արդէն: Ցանկարծ, զայրազին,

մոլեգին , առք կուրցնող մըրիկ մը կը յարձակի Պէ-  
թիեային վրայ . կրկնոցին մէջ կը խորասուզի , կը  
քաշէ , վեր կը հանէ , գրեթէ տաքը գետնէն կը  
կարէ , բռնարար կը դարձնէ հովանոցը . Այս դեռ  
բան մը չ'է : Աղէտքը կատարեալ է . Պէթինա կոր-  
սեցուց իր ժողոք մոյկերէն մէ կը . . . Մոյկ բառելու  
բաներ չ'են , ժողորիկ քնքրշիկ չըռւականներ էին  
գեղեցիկ օդով հագներու համար :

Եւ , այս միջոցին , երբ Պէթինա , յուսակտուր ,  
փոխորկին դէմ կը մարտնչի , իր կապոյտ անդուսէ  
մուհակովք որ թրջած աւազին մէջ կը միսի , այս մի-  
ջոցին , հովը կը բերէ իրեն ժաղերու հեռաւոր բաժ-  
րինը : Զօրագունդն է որ կը մեծնի : Պէթինա մեծ  
որոշում մը կ'առնէ . հովանոցը կը թողու , ժողորիկ  
մոյկը ձեռք կը ձգէ , աղէկ դէշ կը կասկկցէ եւ վա-  
զելով կ'երթայ , ջրհեղեղը զլխուն վրայ :

Վերջապէս , ծառերուն ներքեւ կը հանի . ծա-  
ռերը կը պահպանեն քիչ մը զինքը : Նոր բամբին  
մը , այս անդամ առելի մօս : Պէթինա կը կարծէ  
լավ կառքերու գորդինք : Վերջին ճիգ մ'ալ կ'ը-  
նէ : Ահա դարտամիք . . . Հասու . . . Ամեն էր որ  
համեմէր : Բայն կանոնուն անդին , ժողուարաներու  
ձերմանկ ճիւրը կը առնենայ , եւ , ճամբուն վրայ , կը  
տեսնայ որ մշտչին մէջ տարտամ կերպայով կը տա-  
ռանի , թնդ անօթներու եւ զումակներու երկար  
շարքը : Դարտամիքին շուրջը պատող հինուուրց թրժ-  
րիներուն մէ կուն տակ կ'առաստանի : Կը նայի , կը  
սպասի : Հան է նա , ձխուորներու այս խառնա-  
զանձին մէջ : Պիտի կարենայ ճանշնալ : Խակ , ա-  
նի , պիտի առևնայ զինքը : Դիպուած մը արդ -

և ոք դարձնել պիտի անոր զլուխն այս կողմը :

Պէթինա գիտէ թէ տեղակալ է նա իր գունդին  
Երկրորդ հրետանին մէջ . գիտէ թէ հրետանի մը  
վեց թնդանօթէ ու վեց գումարէ կը բաղկանայ :  
Այս ալ արքա ժօնսթանթէնը սորվեցուցած է ի-  
րեն : Պէտք է թողուլ որ անցնի առաջին հրետա-  
նին , այսինքն վեց թնդանօթ՝ վեց գումարէ համրե-  
լու է , եւ ապա նա պիտի անցնի . . . . )

Նա է ահա , իր մեծ վարապանակին մէջ սպառած ,  
եւ նա է որ , նախ , կը տեսնէ զինքը ու կը ձանց-  
նայ : Քանի մը վայրկեան առաջ , Պէթինային հետ  
ըրած մէկ երկար պառյուր յիշեր էր , իրկուն մը ,  
զիշերուան մօտ , այս դարտապին վրայ : Աչքերը  
վերուցեր էր , եւ , մի եւ նոյն տեղը ուր յուշ  
կ'ածէր թէ տեսած էր զնա , նոյն տեղը նորէն կը  
տեսնէր զայն ահա :

Կը բարեւէր , եւ , բաց դլուխ , անձրեւին տակ ,  
եսին գառնալով՝ ձիւն վրայէն՝ քանի կը հեռա-  
նայ , որքան դեռ կրնայ տեսնել , կը նայի իրեն .  
ինչ որ առջի օրը ըսեր էր , նորէն կըսէր իւրովի .  
— Վերջին անգամն է :

Պէթինա երկու ձեռքերուն շարժումով , հրաժեշ-  
տի ողնոյները կը զրկէր անոր , եւ այս շարժումը ,  
կրկնուելով կրկնուելով , ձեռքերն այնքան մօտ , այն-  
քան մօտ կը բերէին շրթունքներուն , որ կը կար-  
ծուէր թէ . . . .

— Ահ , կըսէր միտն ի վար , Եթէ , ասկէ ետքն  
ալ , չը հասկեար թէ կը սիրեմ զինքը ու չը ներէր  
ստակին . . . .

յանու մշտական պատճենագիրը ու այլը , և այլ —  
պիտու բառը ունե՞ք . այս պատճենագիրը այս այլու

Օգոստոսի 10 ն է , այն օրը որ Ժան ի Լոնդոն  
սիտի դառնաց :

Պէթինս վաղ քաջ առաւտուն կ'արթինաց , կ'եւ-  
լայ , խոկոյն պատուհանը կը վազէ : Վայծառ արեւ-  
մբ կը թափանցէ ու կը վազրատէ արդէն առաւտ-  
ուն դղորչիները : Երկինք , առջի իրեւնը , սպա-  
նուլից էր եւ ամսպատած . Պէթինս քիչ քնացաւ , եւ ,  
զիւերն ի բան , կը ըսէր ինքնիրեն .

— Միայն թէ չահճրեւէ վազն առաւտ :

Աքանչելի օդ մը սիտի ընէ : Պէթինս քիչ մը  
աւելորդ սպատաւ է : Այս բանս յոյս ու սիրու կու-  
տայ իրեն : Օրը ազէկ կը սկսի կոր , ազէկ սիտի  
վերջանաց :

Պարոն Աքօթ քանի մը օրէ ի վեր եկած է : Պէ-  
թինս կը սպատէր իրեն ի Համբը , ծովեզրին զրայ ,  
շոգենաւուն հասնելուն , Սիւզիին եւ մանկանց հետ :

Կաթոգին Համբուրգին իրար քանի քանի ան-  
գամներ : Յետոյ Ռիչարդ , իր քենիին ու զգերով .

— Ե՞յ լաւ : կը սէ խնդ ալով , հարսնիքը Երբ է :

— Ե՞նչ հարսնիք :

— Պ . Ժան Ռիչինի հետ :

— Ա՞հ , քոյրս գրեց ձեզ :

— Սիւզին : Բնաւ . . . . Սիւզին բան մը չէսաւ  
ինձի . . . . Դուք էք , Պէթինս , որ ինձ գրեցիք : Զեր  
ամեն նամակաց մէջ , երկու ամիսնէ ի վեր , այս ե-  
րիստասարդ սպային խօսքէն որի՞ւ խօսք չկայ :

— Ամեն նամակաց մէջ :

— Այս, այս . . . եւ սովորականէն տեղի տռէս  
ու տեղի երկարօրէն կը գրէիք : Չեմ զանգատիր,  
բայց կը հարցնեմ թէ՝ Երբ պիտի ներկայացնէք ին-  
ձի քենեկալս :

Այսպէս խռովով կատակ կ'ընէյ, իսկ Պէթինս կը  
պատասխանէ իրեն :

— Ի՞չ առենէն, կը յուսոմ :

Պարս Սքոթ կը համեմայ թէ գործը լուրջ է : Ի  
գործին, վականին մէջ, Պէթինս գործ նաև ակնէն-  
քը ետ կ'ուզէ Ռիչարդէն : Կը կարդայ զանոնք նո-  
րէն : Խրանցնէ անոր զբայ խռովը է միւս իր նա-  
մակաց ամեն է ջին մէջ : Կը գանայ անոնց մէջ, իր  
առաջին առաջընթացին են մանրաւաճանն պատճառ թիւ-  
նը : Ահա Ժանին նկարագրութիւնը երիցատան  
պարտէ զին մէջ, իր յարդէ գլխարկավիւ ու վաս-  
եալիք ազգանոցուի . . . ու տաս գարձեալ պարտէ  
Ժան, միշտ պարտէ Ժան : Կը առենէն որ իսկ կարծա-  
ծէն շատ խոր առաջ կը սիրէ եղեր :

Արդ՝ ոգ ուստափ 10 ն է : Նախառայշը առարտած է  
դղեալիք : Հասուի ու Պէլլաս անհամեմքեր են : Գիտեն  
թէ զօրագունոցը՝ Ժանի մէկին ու Երկուքին մէջ ան-  
դը պիտի անցնի զիւզին : Խօսացեր էին իրենց  
տանել ցոյց տալ զինուարեներուն անցնիլը : Եւ ի-  
րենց համար ինչպէս նաև Պէթինսին համար, հր-  
դեալու պատց Զերուզ գունդին վերագարաք մէծ ե-  
զերութիւն մըն է :

— Պէթիկ մօքքիկ (1), կըսէ Պէլլաս, Պէթիկ մօք-

քիկ, մեզի հետ եկուր :

— Այ, եկուր, կըսէ Հասուի, եկուր . մեր բա-

(1) Tante. (Տանայշյա)

ըեկամ Ժանր պիտի տեսնանք իր մոխրագոյն մեծ  
ձմռւն զբայ :

Պէթինա կընդգիւնայ , կը մերժէ , եւ սակայն  
ինչ փորձութիւն : Այլ ոչ , չը պիտի երթայ , իր-  
կանը միայն պիտի տեսնաց ժանր , այն զնոտիան  
բացատրութեան համար՝ որուն կը պատրաստուէր  
քսան օրէ ի զեր :

Տղաքը իրենց մանկածոներուն հետ կերթան :  
Պէթինա , Այս զի եւ Ռիշար կերթան զարտաստանին  
մէջ կը նասին , ու զետելին մօտիկը , եւ տեղուսորուել-  
նուն արէս .

— Սիւզի , կըուէ՞Պէթինա , ոյսօր ձեր խօսուումը  
պիտի յիշեցնեմ ձեզի : Կը յիշէք մէջերնիս անցած  
խօսքը , իր մեկնելուն իրկունը : Անանկ որոշեցինք  
որ , եթէ իր զերագարձին օրը բաէի ձեզի . « Այս զի ,  
ապահով եմ զինքը սիրելուս . » անանկ որոշուեցաւ  
որ թոյլ պիտի պիտի առցիք որ բացէ ի բաց իրեն  
զինքն եւ հարցնեմ թէ կուզէ զիս կին առնել :

— Այս , խօսուացայ : Այլ բոլորովին ապահով  
էք . . .

— Բոլորովին ապահով : Արդ կանխաւ կիմացը-  
նեմ ձեզի որ միաք ունիմ զինքը հաս բերել . . . ա-  
հա , հուսա , յարեց խնդարով , այս նատարանին վը-  
րաց . . . եւ նոյն կերպով խօսի իրեն ինչպէս զոք  
խօսեցաք ժամանեակաւ Ռիշարին . . . Այսպէս ընելը  
յաջողեցաւ ձեզի , Այս զի . . . կատարեալ երջանիկ  
էք : Ես ալ կուզէմ երջանիկ ըլլալ : Ռիշար , Աբ-  
զին խօսեցաւ ձեզի պարոն Ռէյնօֆ վրայ :

— Այս , եւ քսան թէ ուրիշ եւ ոչ մէկ մար-  
դու վրայ աւելի լու զաղախար ունի , բայց . . .

— Բայց բառ նաև թէ զուցէ ինձի համար քիչ  
մը հանդարս, քիչ մը քաղքենի ամուսնութիւն մըն  
է . . . Ա՞ն, չոր քուրիկ: Կը հաւաքաք, Ռիշար, որ  
այդ վախը չեմ կրեար գլխէն հանել: Չը հասկը-  
նար թէ ամեն բանի, առաջ՝ կ'ու զեմ սիրել ու սիր-  
ուիլ: Կը հաւաքաք, Ռիշար, անցեալ շարժու: Առա-  
կանի որոգայթ մը լարեց ինձի: Գիտեք, աշխարհի  
վրայ, Թօմանիլի իշխան մը կայ:

— Այս, կրտսեցիք զուք ազ իշխանուհի ըլլու:

— Եպոքեմ անհանու դժուարութեանց չը պիտի  
հանդիսաբ այդ բանը . . . Լաւ ուրեմն, որ մը, ան-  
խանուն մայսար բանը էի Սիւզիին որ, եթէ նեղը մը-  
նամ, Թօմանիլի իշխանը բնու ունելի: Եթիւնար  
ինձի: Երեւ ակացիցիք ինչ ըրտ: Թիւներներն ի  
թուռ օիլ էին: Սիւզի գոռքիկ դաւ մը նիւթեց . . .  
Իշխանին հետ ձաւել առու ինձ . . . այլ արդ իւնքը  
դժուակ եղաւ . . . Ընդունելիք . . . Այս երկու  
ժամանին որ անցուցի նուն հետ, ես ինձի հորդինե-  
լով անցուցի թէ՝ ինչպէս Երբէք կարօդ եղած էի  
այդ պիտի խօսք մը բանը . . . Զէ, Ռիշար, չէ, Սիւ-  
զի, չեմ ուզեր ոչ իշխանուհի, ոչ կուսուհի, ոչ  
մարքիզուհի ըլլու: Ես կ'ու զեմ արիշին Ռէյնա ըլ-  
լու: Եթէ պարս մաս Ռէյնա կամենաց . . . Եւ  
այդ հաւաքաք չէ:

Զօրագունդն ի գիւղ կը մոնարք եւ աշան յանկործ  
վաղը հնչեց ոգին ու ապահութեան մէջ, պատե-  
րազմական եւ զուարժապին: Երեքն ի պատճին ըստ  
Թիազին: Զօրագունդն էր, Ժանն էր, որ կ'անց-  
նէր . . . Զայնը նու ազեցաւ, նու ազեցաւ, եւ Պէթ-  
ին նորէն առնելով.

— ԶԵ՞ւ այդ համաստի չէ։ Կը սիրել պիս սակացնե, եւ չառ, այլ լու մը չը զի զիանալով թէ ինչ եմ եւ : Ես կը կարծեմ թէ այսօրինակ սակառ մ մը չէ սպասի ազգի, ի բրեն եթէ զիս ու ելլու լու հանդեպ, Եւ ասոյ հասմաք է որ ձենէ թայրուութիւն կը խեզ քեմ որ երթամ այս իրենուն իրեն հետ խօսիմ ազտառ համարձակ բաց սրսուով։

— Եղուտանեք ձերի այդ թոյլուութիւնը, ազտառասիստեց Ռիշար, Երկու քու ալ կուտանեք . . . Դիմենք որ Երթէք այնպիսի բան չէք քննը, Պլթինա, որ չ'ըլլայ աղիմիւ ու զեհանձնե։

— Կը մորմամ զանէ։  
Ա անկիցիները կը դ տոննան վասղելով ժամեր ուներ են. վարին ճիս ճերմանկ Եղեր Եր. բարի բար ըսեր էր իրենց։

— Միայն թէ, յարեց Պէլլա, սիրուն չ'եղաւ, չը կեցաւ մեղի հետ խօսելու համար . . . ստիրաբար կը կենաց, իւրկ այս աստեղ չ'ուզեց։

— Ուզեց, ուզեց, կը պատասխանէ Հասոսի, զի նայի սանել շարժում մը քրու։ . . . Եւ ասաւ չ'ուզեց, զնաց։

— Շերթապէս, չը կացնեցաւ, եւ այնքան զուարձալի է զինուորականի մը հետ խօսիլ, մանաւ մեր երբ ճիս զբայ բլլայ այս այս։

— Մինակ այդ չէ, մենք պարուն ժամեր կը սիրենք, ույն ալ կայ։ Եթէ գիտեայիր, հայրիկ, ինչ բարի է, ինչ ազէկ խազալ գիտէ մեղի հետ։

— Եւ ինչ զեզեցիկ զեազ բառ թիւները կ'ընէ . . . Հասոսի, չ'եւ յիշեր, այն մեծ սա անցովն (1) որ զ-

(1) Polichinelle. (Փայտոյ խունդ) Գու Գայցին (2)

ծեզ այնքան չպլիկ եր իր գաւազանովը . . . .

— Խակ կատուն, կատուն աղ կար, թնջորէս կը ձեւացնեն բարախիլ ինք (1) մէջ :

Երկու տղառքը կը հեռանան իրենց բարեկամ ժամին վրայ խօսելով :

— Մոտզիւ, կըսէ պարոն Աքօթ, ամենքը կը սիրեն զինքը այս տան մէջ :

— Դուք աղ ամենուն պէս պիտի ընէք, երբ զինքը ձանչնաք, կը պատասխանէ Պէթինա :

Զօրագունդը դրսթել ակասա, մեծ ճամբան վրայ, երբ դիւզէն դուրս երաւ . . . . Աւասիկ այն դարտափը ուր Պէթինա կը գտնուէր անցեալ տուառ . . . . Ժան կըսէ ինքնիրեն . . . . Եթէ հոն բրայ : Կը զանդիմէ ու կակինկայէ միանդ ամայն . . . . Դրույոր զեր կ'առնէլ, կը նայի . . . . Հոն չէ :

Չը տեսաւ զնու մէյ մ'աղ : Ա՛լ չը պիտի տեսնայ . . . զոնէ երկար տակնէ : Նոյն իրոկունք պիտի մեկնի, Ժամբ վեցին, Բարիզ երթար համար : Պատերազմի պաշտօնատան տեսուշներէն մէկը կայ որ հոգ կը տանի իրեն : Անոր միջնորդ ութեամբ պիտի ջանայ որ զինքը ուրիշ զօրագունդի մը մէջ զրկեն : Ժան շատ մասնաց առանձին, երբ հոն ի Աւոքօթ եր, Եւ ահա այս եզրաւ իր խորհրդածոթեանց արդիւնքը . կարելի չէ, որէ ուր չէ որ Պէթինայի ամուսինն ըրբայ :

Զինուորներն երբ ձիերնուն իթան զօրամոցին բակին մէջ, Ժան միաբ-բարուի ըստաւ իր գնող ասկեամին ու բնիկերներուն : Ամենայն ինչ վճարեալ է : Ազատէ, կընայ մեկնիկ . . . . Չերթար տակայն : Զորս զին-

(1) Guignol.

կր նոյի . . . : Ի՞նչ երջանիկ էր երեք ամիս առաջ ,  
երբ այս մեծ բակեն դուրս կ'ելնէր ձիով , ի դաշին թնդանօթաց որք կը թաւարէին Սուզիների ապա-  
յասակին վրայ : Ի՞նչ տիրապետն դուրս պատի ելնէ  
այսօր հոներէ : Իր կեանքը հոն էր ժամանակաւ . . .  
ուր պիտի ըլլայ հիմա :

Տուն կը մտնայ , իր սենեալը կ'ելնէ : Տեղին Աքո-  
թին նաևսկ կը դրէ . կ'ըսէ թէ , պաշտօնական դոր-  
ծի համար , հարգեազ բաժ է մեկնիլ անմիջապէս . չը  
պիտի կարենայ ձաշել ի դզեակը . իր յուշարաք բա-  
րձր ները կը յանձնէր օրիորդ Պէթինային համար . . .  
Պէթինա . . . Ա՛հ , ի՞նչ դժարաւ դրեց այս բառը . . . :  
Կը դոցէ նաևսկը . . . : Պահ մը վերջը պիտի դրէ :  
Երթարակ պատրաստութիւնները կը առանայ :  
Ալա պիտի Երթայ հրատեշտ առաջ իր կնքահօր :  
Ասի ամենէն առելի ձանը կուզայ իրեն . . . : Քիչ  
ժամանակի բացակայութեան խռոք պիտի ընէ ա-  
նոր :

Դրասեզանին դարակը կը քաշէ , մշջէն սոսակ առ-  
ներու համար : Առաջին բանը որ աչքին կը զարնէ  
ժաքրիկ նամակ մըն է կազմակալ թուզթի վրայ  
գրաւած : Միակ առանակն է Պէթինայէն ստացած :

« Կը բարեհամձիք դրաբերիս յանձնել այն գիրքը  
որուն վրայ խոսեցաք ինձ երէկ իրկուն : Թերեւս  
քիչ մը ըուրջ ըլլայ ինձի համար . . . : Սակայն կ'ու-  
զեմ կարգալ ժարձել զայն . . . : Մէկ պահելին : կա-  
րելի եղածին չափ շուտով ելիքք : »

Ստորագրեալ . Պիրինա : Ժան կը կարդայ ու կը  
կարդայ այս քանի մը տողերը . . . : Այլ քիչ մը ետ-  
քը ու չը կրնար կարդալ . . . : Աչքերը կը պղտորին :

— Այս միայն պիտի մեռյ թնծի իրուք, կը ուշ ինք-  
նիրեն :

Նոյն միջոցին, Քօնսթանտին արքան Բոլինին հետ  
գլուխ գլխի տուած իրենց հաշիւները կը նեն :  
Դրամական վիճակին ոքանչելի է : Դրամարդկողին  
մէջ երկու հազար ֆրանքին ուեւլի կայ : Եւ Սի-  
զին ու Պէտրոսյին բազմանքը լուսին կատարուած  
է : ով աղքատ չը կայ երկրին մէջ : Պատաւ Բարինը,  
առեն առեն, խոզի փոքրիկ խոյթեր ով կը զգայ :

— Կը տեսնք, տէք երէց, կը բու : թերեւս քիչ  
մը շատ կուտանք կոր : Միւս զիւ զերուն մէջ կը  
սկսի կոր տարածացնիլ թէ հաս ամենուն համար բաց  
է աղործութեան զ անձանակը : Եւ զիսէք ինչ պիտի  
պատահի օր մը : Պիտի զան իրքեւ աղքատ հաս-  
տատուիլ Լոնկվալի մէջ :

Երէցը յիսուն ֆրանք կուտայ Բոլինին . նա ով  
դուրս կ'ենի, այն ՅՈ ֆրանքը աղքատ մարդու մը  
տանելու՝ որ խորի սացակի մը վրայէն վար իշնա-  
լով թեւը կուրեր էր :

Արքա Քօնսթանտին էն տուանձին կը մնայ երիցա-  
տան մէջ : Մասնաւ ունիւ : Զօրագունդին անցնելու ը  
զիսեց . այլ ժան մէկ վայրկեան միայն կանել առաւ :  
ախտոր կ'երեւնար : Արդէն քանի առենէ ի վեր,  
արքան լաւ նկատած էր, թէ ժան չ'ունի իր առ-  
ջի շնորհ բնութիւնն ու զա արթութիւնը : Երէցը  
շատ չ'էր հոգ ըրած, երիտասարդ ական փոքր վիշտ  
մը կարծելով զ'այն, որ խեղճ ծերունի քահանայի  
մը զիսնալու բանը չ'էր կրնար ըլլալ : Այլ, այն  
օր, ժանին անդ առմունքը ակներեւ էր :

— Մէկ պահէն պիտի զամ, կեքահայր, ըստը

էր Խառ երէցին . ձեզի խօսելու պէտք ունիս :

Յանելարծ երեր զայեր էր : Արրա Քօնսթանիլէն ժամանակ չ' էր ունեցեր լուրուին կոչկոսը տարու , կամ լու եւս կոչկոները , զի հինգ լին զրեր էր զբաղանք , նկատելով որ լուրու արժանացած էր այս խեթյաբին , ասար երկայն իշխանաց օրեր համարայ ընելով եւ քառնի չափ զիւերեներ ասաւզերուն տակ անցնելով : Ալորէն խակ , տիկին Սքօթին զրդեալքը հաստատուելին իւ լիւր , լուր չատ անգամ բազմաթիւ կոչկոներ ունեցած էր : Արրա Քօնսթանիլէն մասոց , չապյ եղեց էր : ինքզինը միլիոնամբ ը կը զգաքր : Ժամեին ձիուն չաքարը իր ազգականաց մէ կե էր : Դաւ ոք մ'ալ , զիչ մերոց որ լուրուին իր մէ անջինական ժամբիկ հառա պիտի ուղղ զելք :

— Ասի , և անելուալի նոր դղիկու հետաց կոզմին է : Ազգի եցիք իրենց համար այս իրկուն է :

Ժամեր երեքին էր երբ : Ժամե երիցատունը երաւ , եւ երէցն անմիջապէս առաջ է :

— Ենթի բսիր թէ խօսելու պէտք ունիս ինթի . . . . ի՞նչ բանի զբոյ է .

— Այնպիսի բանի մը , կիրառհայր , որ ձեզ պիտի պարմացնէ , զշտացնէ . եւ որ զիս ալ կը զշտացնէ : Հրամելուան կուզամ կուզամ մեզ մեզի :

— Հրամելուար կը մեկնիս :

— Այս , կը մեկնիմ :

— Երբ : այս պահանձ մէկ , մասի , այս յան :

— Այսօր իսկ . . . երկու ժամեն առաջ պահանձ լին :

— Երկուն ժամեն , բայց այս իրկուն զգեստը պիտի հաշեինք :

— Հիմա տիկին Աքոթին զրեցի ներռամ խեղըւեր  
ըստ համար : Պարտառ որուած էմ անոպանաւու մել-  
իիւ :

— Ընդ հոգով բան ուժութեան ու այս խոհանուսակ

— Ընդ հուսու այսու ու խոհանուսակ ու այս խոհ

— Եւ մեր կերթառաւ զանու միջանձնի օրու :

— Բարիզ ինչու այդ յանկարծական որոշումք :

— Ո՞չ այնքան յանկարծական : Եասուց արդէն

կը մտածեմ : ոյ եասուց ու մենագույն անհանուսակ

— Բայց ինձի բան մը չէիր բասած . . . : Ժան , բան  
մը կը դառնայ կոր : . . . : Մեծցար հիմա եւ ալ իրա-  
ւունք չունիմ քեզ իրրեւ մանուկ վարելու , բայց  
վերթառավէս , զիտես թէ որքան կը սիրեմ քեզ . . .  
Եթէ առաջնորդենք , նեղութիւններ ունիս , ինչու  
չէս բաեր ինձի : Թերեւս բարի խորհուրդ մը կըր-  
նամ տալ քեզի ժան , ինչու Բարիզ կերթառ :

— Կուզէի չբաել ձեզի . . . : Պիտի զշտանաք . . .  
այլ իրաւունք ունիք զիտենալու . . . : Բարիզ կեր-  
թառ խնդրելու համար որ զիս ուրիշ զտնդի մը  
մէջ զրկեն :

— Աւրիշ զտնդի մը մէջ . Սուզինեին սիրտի թո-  
ղուս :

— Այս , ահա այդ է , Սուզինեին սիրտի թո-  
ղուս . . . քիչ տանիի համար . բայց վերթառավէս Սո-  
ւինեին թողուս , ոյս է ուզածս , ոյս է կարեւորք :

— Իսկ ես , Ժան , չես մտածեր զիս ուրիշին . . .  
Քիչ տանիի համար կը բաւս . . . Քիչ տանի . այլ ես  
այնքան ունիմ տարելու , քիչ տանի : Եւ այս  
վերթին օրերը ուր Աստուծոյ շնորհը մոցյեցաւ

ժրաս , իմ երջանկութիւնս էր , Ժան , այս , իմ երջանկութիւնս էր քեզ հոս իմ քոյս ունենալ : Եւ զու կ'երթան . Ժան , սպասէ քիչ մը , Համբերէ , շատ երկար չը սփստի տեւէ . սպասէ որ ամենաբարին Աստուած զիս իրեն կանչէ , սպասէ որ երթամ գտնամ հոն , առընթեր , Հայրդ ալ , մայրդ ալ . . . . Մի երթար , Ժան , մի երթար :

— Եթէ դուք զիս կը սիրեք , ես ալ զձեզ կը սիրեմ . . . եւ դուք բաւ գիտեք զ'այս . . . .

— Այս զիտեմ :

— Ես ձեզի Համար միւս նոյն կաթողին ուրին ունիս որ ունէի երբ տղայ Եի , երբ դուք զիս ասիք , մեծ ցուցիք : Այրու չը վիխուեցաւ , չը սփստի վիխուի երրէք . . . . Այլ եթէ պարտաւորութիւնը , եթէ պատիւը կը Հարդարդրեն զիս Երթալ . . . .

— Ահ , եթէ պարտաւորութիւնն է , Եթէ պատիւն է . . . . Ալ բան մը չ'եմ ըսեր , Ժան . . . . Ամեն բան ես կը մնայ , ամեն բան , ամեն բան : Ես քեզ միշտ բաւ զատուոր ձանչցած եմ քու պարտաւորութեանդ , քու պատուոյզ . . . . Դնա , զաւակս , զեա : Բան մը չ'եմ Հարցներ քեզի : Բան մը չ'եմ ուզեր զիտեմալ :

— Ե՛հ ուրեմն , Ես կ'ուզեմ ամեն բան ըսել ձեզի , զուեց Ժան , իր յու զմունքէն նու աճուած : Ես զի՞ յաւ եւս է որ զիտեմաք ամեն բան : Հոս կը մընաք դուք , սփստի զատեաք ի զգեամք . . . սփստի տեսնաք . . . զեա :

— Ո՞վ . . . զեա :

— Պէթինան :

— Պէթինան :

— Կը պաշտեմ զինքը , կնքահայրդ իմ , կը պաշտեմ :

— Ով իմ խեղճ՝ զաւածս :

— Ներեցէք որ այս բաներուն վրայ կը խօսիմ ձեզի . . . այլ ասոնք կ'ըսեմ ձեզի որպէս ովհափ բռէի հօրս : Եւ ասպա . . . երբէք չը կրցայ ըսել մէկու մը , եւ ասի կը խզդէր զիս . . . Այս , խելազարութիւն մըն է այս որ տակաւ վրաս տիրապետեց , կամքիս հակառակ , զի լու կը խելամսէք . . . Տէր Առաւած , հոն ահա ակասայ սիրել զինքը : Գիտէք , Երբ իր քրօջը հետ եկաւ . . . Հազար ֆրանքներու փոքրիկ ծրագրները . . . իր մազերը որ քակու եցան . . . Եւ իրկունը , Մարեմոյ ամիսը . . . Ապա թոյլ տրուեցաւ ինձ ազատաբար , ընտաներար տեսնել զինքը . . . Եւ դուք իսկ , անդադար , իր վրայ կը խօսւէիք ինձի , իր քաղցրութիւնը , իր բարութիւնը կը գովէիք : Քանի անգամներ ըսիք թէ , իրմէ լուագոյն բան չը կայ աշխարհի վրայ :

— Եւ այնպէս կը մասածէի . . . ու այնպէս կը մըտածեմ տակաւին . . . Եւ ոչ ոք ինէ լու կը ձանձնայ զինքը հոս , զի ևս միայն զինքն աղքատներուն խրձիթին մէջ տեսած եմ : Եթէ գիտնայիր , մեր չըրջագայութեանց առեն , առաւ օսուն , բնչովք քաղցրը ու բնչ քաջ է նոս : Ոչ ցականքը եւ ոչ տառապանքը չեն խրակցներ զինքը . . . Այլ աղէկ չեմ ըներ որ ասոնք քեզի կ'ըսեմ . . .

— Ոչ , ոչ , այլ եւս տեսնել չեմ ուզեր զինքը , բայց թէ լսեմ որ խօսին վրան՝ կ'ուզեմ :

— Կենացգ մէջ , Ժան , չը սիմոփ հանգիստու լուագոյն կեօջ եւ որ ունենայ տեղի բարձր զգա-

ցումներ : Նայէ որ տասիհնան . որ մը , — զիս բայց  
կառքով տարեր էր , որուն մէջ խաղալի ինձներով յե-  
ցուն էր . . . այս խաղալի ինձները պղտիկ հիւանդ աղ-  
ջկան մը կը տանիք , եւ , զանանք ձեռքը տարով ,  
խնդացներու համար , այն պղտիկ աղջիկը զուար-  
ժացներու համար , այնքան անուչ կը խօսէր անոր  
հետ , որ քեզ կը մոռածէի ու միտո ի վար կը բռնի ,  
հիւան կը յիշեմ . « Ահ , Եթէ աղքան Ըլլար » :

— Այս , Եթէ աղքան Ըլլար . բայց աղքան չէ :

— Ահ , չէ . . . վերջապէս , ինչ ընեա , զաւակա .  
Եթէ կը շարջապուհու զինքը տեսներով , իր մասն  
ասպրելով , որովհետեւ ամեն բանէ առաջ պէտք ե-  
ղածն այն է որ զու չը տառապիս . . . գնայ , այն-  
պէս թնդ Ըլլայ , գնայ . . . Եւ սակայն . . . եւ սա-  
կայն . . .

Ծերունի երէ ցը սկսու խոճոնել , գլուխը ձեռքե-  
րուն մէջ ինձաւ ու քանի մը վայրիկան լուռ մնաց .  
ապա շարունակեց :

— Եւ սակայն , Ժան , զիսէս ինչ բանի կը մը-  
տածեմ : Օրիորդ Գլթինան շատ անդամ տեսաց ,  
Լոնկալ գային ի վեր : Լաւ ուրեմն , կը խորհիմ ,  
— չէի պարմանաթր այն տանի , շատ բնական կը թր-  
ւէր ինձի որ հոգ տածեն քեզի , — բայց վերջապէս ,  
քու վրադ կը խօսէր միշտ , այս , միշտ :

— Ի՞մ վրաս :

— Այս , եւ հօրդ վրայ , ու մօրդ վրայ : Հետու-  
քրքիր էր խմանալու թէ ինչպէս կ'ապօփս , կը խրնդ-  
րէր որ իրեն բացատրեմ թէ ինչ է զինուորի մը  
կետերը , ձևարիս զինուորի մը կետերը որ իր ար-  
հետաց կը սիրէ ու զայն խղճի մասք կը կատարէ :

Զարժմանալի բան, որմէ հետև այս բանը ըստիր ինձի, մոքիու մէջ շատ յիշտակներ կը ծնին: Հազար մանր բաներ իրարու քով կը շարուին, մատ կռւզական իրարու . . . : Արդ, ահա, Հայրէն վերապարձաւ երէկ չէ առջի օր, ժամը երեքին: Լուս, հասնելին ժամը մը ետքը, հոս էր: Եւ խորյուն, քու վրաց խռուցաւ հետո: Հարցուց ինձի թէ՝ նաևուկ գրեցիր ինձի, թէ՝ հիւանդ չէիր եղած, թէ՝ Երբ պիտի զաս, որ ժամանեն, թէ՝ զօրագոնողը զիւզին մէջէն պիտի անցնի:

— Անօպուտ է, կնքահայրդ իմ, այդ միշտակները միտք բերել:

— Ոչ, ահօպուտ չէ . . . : Այնքան գոհ կերեւնար, այնքան երթանիկ իսկ, մասնելով թէ քեզ պիտի տեսնար վերատին: Այս իրկուտն ձայր խրախանն մը պիտի ըլլար իրեն համար . . . : Քեզ իր քեռաբազ պիտի ներկայացներ, որ եկած է: Այս միջնիս ոչ ոք կոյ դզեսմէր, ոչ մէկ հրառիրեալ: Այս կէտին վրայ շատ կը պնդէր, — եւ կը յիշեմ իր վերջին խռոքը, — հունա էր, դրան ակնին վրայ: « Հինգ հոգի միայն պիտի ըլլանք, ըստ ինձի, դոք եւ պարոն Ժանիր, քոյրու, քեռայրու ու ես: » Ու յարեց ինեկ ալով: « Ճշմարիս ընտանեկան սեզան մը: » Այս բառին վրայ ձգեց գնաց, պահաւ գրեթէ: Ճշմարիս ընտանեկան սեզան մը: Գիտեն ինչ կը կարծեմ, Ժան, պիտիս:

— Պէտք չէ այդ պէս կարծել, կնքահայրդ իմ, պէտք չէ . . . :

— Ժան, կարծեմ թէ կը սիրէ քեզ:

— Ես ու այնովէս կը կարծեմ:

— Դու ալ :

— Երբ զինքը թողոցի , քսան օր կայ , այնքան  
յուղեալ էր : անքան թունա երած էր : կը տևսեար  
որ տխուր եմ ու թշուռ : Չէր ուզեր զիս թո-  
ղուլ որ մեկնիմ : Դղեալին տանուզ զին զլուխն էր :  
զիաք եւզաւ որ ժամաշիմ . . . այն . . . ժամաշիմ : Քիչ  
մասց որ պիտի խօսէի , պայթէի , ամեն բան բաէի  
իրեն : Յիսուն քայլ առներէ յետոյ՝ կանկ առի , ե-  
տիս դարձաց : Նա այլ եւս չէր կրնար զիս ահա-  
նել : Բարսովին մութին մէջ էի : Բայց ես կը ահա-  
նայի զինքը : Կեցած էր , հան , անշարժ , ուսերն  
ու թեւերը բաց , անձրեւին տակ , նայելով այն  
կազմը ուրկէ : Կերպնայի : Թերեւս խենդ եմ մուծե-  
րով որ . . . : Գուցէ զթոթեան զգացում մըն էր  
միայն : Այլ ոչ , քան զզթոթիւնն ուրիշ բան մըն  
էր . զի զիտք ինչ բառ , հետեւեալ առտուն :  
Սարսափելի օդով մը եկառ ժամը հինգին , զօրա-  
գունդին հետ ճամբան զյայէն անցնիլու առանելու ,  
եւ , հան , ինչ կերպով հրաժեշտի ողջոյնը տուա-  
ինծի . . . Ահ , կնքահայրդ իմ , կնքահայրդ իմ . . . :

— Ապա ուրեմն , կրաէ խեզձ երէցը , բարսովին  
ժամայոց , ուզելորոյս (<sup>1</sup>) , ապա ուրեմն ալ բնաւ յետ  
հասկեար : Եթէ զու զանին կը սիրես , Ժան , եւ ե-  
թէ նա ալ քեզ կը սիրէ :

— Նա մանաւնու տուր համար է որ պէտք է  
մեկնիմ : Եթէ միայն ես ըլլայի : Եթէ վասահ ըլ-  
լայի թէ իմ սէրս չէ նշաբած , վասահ ըլլայի թէ  
անելէ ինք ալ ի խանով չէ շարժած , կը կենայի . . .  
կը կենայի . . . միայն զինքը առանելու քաղցրու-

(<sup>1</sup>) Désorienté.

Հայոց Սբություն

թեանը համար , ու կը սիրէի զինքը հեռուէն , առանց յուսոյ բնաւին , միայն զինքը սիրելու երջանկութեանը համար . . . . Այլ ոչ , բայ հասկցուն . . . եւ զիս չը պատեցներէ զատ . . . վերջապէս ահա այս է որ կը հարցադրէ զիս երթող . . . .

— Զէ , ալ չ'եմ հասկնար : Լու զիսեմ , որդեակի իմ եզկելի , թէ այնպիսի բաներու զբայ կը խօսինք որոնց մէջ խնասուն չ'եմ . . . բայց վերջապէս , երկուքդ ալ բարի էք , ծաղկահաստի ու սիրուն . . . Դու զանի կը սիրես . . . անի քեզ կը սիրէ Եղեր . . . եւ զու չ'ես կրնար :

— Հապա իր ստուկը , կնքահայրդ իմ , իր ստուկը :

— Ի՞նչ հազդ իր ստուկը , ոչի նչ է ստուկը : Միթէ ստուկին համար սիրեցիր զինքը . . . Մանաւոնդ թէ հաւասարէ ստուկին սիրեցիր : Կղձմանքդ , Ժանդ իմ , հանդարտ է այդ նկատմանը , եւ այդ կը բառէ :

— Զէ , այդ չը բառէր : Բայ ական չ'է ինք իր վրայ լաւ կարծիք ունենալ . ովէտք է որ ուրիշներն ալ ունենան այդ կարծիքը :

— Ո՛չ , Ժան , քեզ ձանչցօգներուն մէջ ով կըրնայ քու վրագ կասկածիլ :

— Ո՛վ զիսէ . . . . Եւ ապա , քան այս ստուկի ինդիրն ուրիշ բան ալ կայ , ուրիշ աւելի լուրջ եւ աւելի ծանր բան մը : Ես իրեն յարմար ամուսինը չ'եմ :

— Եւ ուրիշ ո՞ր արժանաւորագ ոյնը . . . .

— Խնդիրն այն չ'է թէ ես ինչ կարծեմ . ովէտք է նկատել թէ ինչ է անի եւ նկատել թէ ինչ եմես . ովէտք է հարցնել իւրաքի թէ ինչ պիտի ըլլայ իր

կեռնքը և ինչ պիտի ըլլայ իմ կեռնքս . . . Օր մը ,  
Բօլը , — զիտէք , քիչ մը բերնին Եկածը կըսէ . . .  
բայց այս կերպով աւելի պայծառ կը համեց-  
ուի մարդու միտքը , — խնդիրը Պէթինային վրայ  
էր . . . Բօլ բան մը չէր կատկած եր . . . ապա թէ  
ոչ . . . բարի է նա . . . այսպէս չէր խօսեր : Ուստի ,  
բայց ինձի . «Պէթինային համար , այնովիսի ամեն-  
սին մը պէտք է , որ բոլորանուէր իրն ըլլայ , բոլո-  
րանուէր , ամենսին մը որ ուրիշ հազ չ'ունենայ բայց  
միայն անոր կեռնքը մշտնջենի խրախնան մը ընել .  
վերջապէս ամենսին մը որ անոր ասամբին արթառութն  
հաստոցանէ . » Դուք զիս կը ճանչնաք . . . Կարելի  
չէ , պէտք չէ որ այսպիսի ամենսին ըլլամ : Ես զին-  
ուոր եմ և զինուոր մնալ կ'ու զեմ : Եթէ զինուորա-  
կան ընթացքին արվածներն այնպէս բերեն որ պէտք  
ըլլայ Ալպեանց մէկ խորշը երթալ կամ Ալժէրիի  
անհնչան զիւղերէն մէկը , կրնամ իրմէ խնդրել որ  
հետո զայ : Կրնամ զինքը զատապարուել այն զին-  
ուորի կնօթ կեռնքին , որ , վերջապէս , զինուորի կեռն-  
քին բաել է այն աղ քիչ մը : Մտած եցիք այն կեռն-  
քին որ կը վարէ նա այսոր , բոլոր այն պերճու-  
թինքը , բոլոր այն զուարճութիւնքը . . .

— Այն , կրտէ արքան , ասի աւելի ծանր է քան  
ասամբի խնդիրը :

— Այնքան ծանր որ բայրան չը վերցնէր : Այն  
քանի օրուան միջացը զարս հոն անցուցի , առան-  
ձին , բանակին մէջ , շատ խել մտածեցի այս ամե-  
նուն վրայ . . . այս միայն մտածեցի . . . ու , սիրե-  
լով զինքը ինչպէս կը սիրեմ , շատ զօրաւոր պէտք  
է ըլլան այն պատճառները որ որոշակի կը ցուցնեն

ինձ այսօր իմ պարտաւորութիւնս : Իս պարտաւորութիւնս է երթալ . . . հեռու , չառ հեռու երթալ , կարելի եղածին չափ հեռու : Ծառ տառ ապանք պիտի քաշեմ . . . այլ պէտք չ'է որ տեսնեմ զ'անի վերաբն : պէտք չ'է որ տեսնեմ :

Ժան թիկնաթուի մը վրայ նետուեցաւ , զատարանին մօս . կղծ կած մնաց հօն : Մեր երեցը իրեն կը նայէր :

— Վեզ գժբաղդ տեսնել , հէք որդեալ , այսպիսի կարիք մը ունենան զոհ . . . : Կարիք զառն է այս , կարիք անիբառ . . . :

Այս միջնացին , կամաց մը զուռը զարինուեցաւ :

— Ո՞հ , կրտէ երեցը . . . մի վախնար , Ժան . . . կը ճամբեմ ես եկողը . . . :

Արքան զէսպ ի զուռը ուղղուեցաւ , բացաւ զուռը եւ ես ես քաշուեցաւ իրեւու անուենելով երեւոյթի մ'առջեւ :

Պէթինան էր . . . : Անմիջապէս տեսակը էր Ժանը , եւ ուղղակի անոր երթապալ .

— Դուք . . . զոչեց : Ո՞հ , որքան զո՞հ եմ :

Ժան սաքի ելեր էր . . . : Պէթինա անոր երկու ձեռքերը բաներ էր , եւ արբային ուղղելով .

— Ե, երում կը խնդրեմ ձենի , աէք երէց , եթէ նախ իրեն զացի . . . : Չեզ , երէկ տեսայ . . . խել զինքը՝ քառն երկար որերէ ի վեր չ'էմ տեսած , չ'էմ տեսած այն իրկունէն ի վեր ուր մեկնեցաւ տանէն՝ տիսուր եւ վշտագին :

Ժանին ձեռքերը միշտ իր ձեռաց մէջ էին : Ժան զօրութիւն չ'էր զդար ոչ շարժում մ'ընելու , ոչ բառ մ'ըսելու :

— Իսկ այժմ, շարայարեց Պէթինս, այժմ ունելի  
լոն էք: Ո՞չ, տակառին ոչ... կը ունենամ... ար-  
խուր էք տակառին...: Ա՞հ, ինչ ազգերի բրդ գալս...:  
Ազգեցութիւն մ'եղաւ ինձի, Սակայն, կը նեղութիւ-  
քիշ մը, շատ կը նեղութիւն ձեզ հոս գտնալու ու: Պիտի  
հառկնաք թէ ինչ խնդրելու կող ուն ձեր կերպահօր-  
մեն:

Ժանին ձեռքերը թողուց, ու արրային զատնա-  
լով.

— Իու զամ, տէր Երեց, ձեզի ազաշելու որ լուս  
իմ խոստանենքս...: Այս, խոստանենքս...:  
Այլ գուք մի մասքերէք երթալ, պարուն Ժան: Խոս-  
տանինանքս Հրատապարտեաւ պիտի յնեմ: Յօժ արտա-  
կամ պիտի խօսիմ ձեր տողեւ...: Եւ կը մտած և մ ու-  
թէ այսողէն աւելի լաւ պիտի ըլլայ: Նոտինք...  
Կուզեք:

Վատահ ու խիզախ կը զգար զինքն յանձին: Տենդ  
ունէր, այլ այն աննոցն որով բռնուած զինուորը,  
պատերազմի զաշտին վրայ, կը հոգեւորի, կը զիւ-  
ցազնանայ, վոտնոցը կ'արհամարէէ: Այն յուզմուն-  
քը՝ որ Պէթինսյին սիրուք սպորտանէն արտգ բա-  
րախէլ կուսար՝ բարձր ու վում յուզմոնք մըն էր:  
Կըսէր նա իւրոցի.

« Սիրուէլ կ'ուզեմ: Սիրուէլ կ'ուզեմ: Երջանիկ ըլ-  
լալ կ'ուզեմ: Կ'ուզեմ որ Երջանիկ ըլլայ: Եւ որով-  
հետեւ նա չը կրնար քաջութիւն ունենալ, ինձ անեկ  
է քաջ ըլլալ Երկուքնուս Համար, ինձի կ'յշնայ յա-  
ռաջ ընթանող միայնակ, բարձրազլուիր և անզե-  
հեր, յազբակալելու մեր սէրն ու մեր Երջանիկու-  
թիւնը: »

Պէթիեա, առաջին բառերէն ի մեր որ արտասահմաց, կատարեալ իշխանութիւն մառեր էր արքային ու վաճին վրայ: Կը թողուին որ ըսէ, ու կ'ընէին ինչ որ կըսէր: Դաւ կը զգային որ վաեմ էր ժամը, կը հասկեային թէ՝ ինչ որ անցնէր հան՝ վրառաւկան, անդառեալի պիտի ըլլար: Այլ ոչ մին ոչ միւ որ նախառեսելու վիճակի մէջ էին...: Առեր (Եւ) նասեր էին, զրեթէ մեքենաբար: Կը սպառէին, մը-տիկ կ'ընէին...: Այս երկու խոհապետ մարդոց մէջ, Պէթինա միայն, պազարիւն կը մնար...: Յըս-տակ եւ որոշ ձայնով մը սկսաւ:

— Պէտք է նախ ըսէմ ձեզի, տէր երէց, եւ ոյս ձեր խոհապետը բոլորապին հանդարակեցնելու համար, ովտք է ըսէմ ձեզի թէ ևս հսու եկայ քրօնու եւ քեռարօն հաճախթեամբը: Գիտեն թէ ինչու համար եկած եմ, զիտեն թէ ինչ պիտի ընեմ: Զէ թէ միայն զիտեն, ոյլ կը հառանին: Հասկցուեցու, այնպէս չէ: Էյ լաւ, զիս հսու բերօնը ձեր զրած նամակն է, պարոն Ժան, այն նամակը որով խմացուցիք քրօնս թէ չ'էք կրնար, այս իրկուն, գալ մեզի հետ հայել եւ թէ հարկադրած էք մեկնիլ անպատճառ: Այս նամակը իմ բոլոր խորհուրդներս տակն ու վրայ ըրաւ...: Արդ արեւ, այս իրկուն, — միւս քրօնս ու քեռարօն թոյլսուութեամբ, — կ'ուզէի հային ետքը, ձեզ գարասանիք տանիի, պարոն Ժան, նստիլ ձեզի հետ նատարանի մը վրայ, — ուեզն ալ տղու ովէս որոշեցի կանխառ, պահ մ'առաջ: — Հոն, փոքրիկ ձառ մը պիտի ըսէի ձեզի, զոյ պատրաստելով պատրաստեր, երկասիրեր ու զրեթէ զոյ ըրեր էի, զի ձեր մեկնելին ի մեր, ու-

րիչ բանի վրայ չը մտածեցի այլ այս ճառին միայն :  
Ես ինձի թերնուց կ'ըսեմ զ'այն առաւօտէն մինչեւ  
իրկուն : Ահա ինչ որ մխաքս դրեր էի ընել եւ կը  
խելամանք թէ ձեր նամակը . . . : Անձրկեցայ միա-  
յի . . . : Քիչ մը խորհեցայ եւ բայ ինքնիրենս որ , ե-  
թէ իմ պղափիկ ճառս ձեր կնքահօրն ուղղեմ , դրե-  
թէ ձեզի ուղղածի պէս պիտի ըլլայ : Ուստի , ձե-  
զի եկայ աղաջել , տէր երէց , որ հաճիք զ'իս մտիկ  
ընել :

— Մտիկ կ'ընեմ , օրիորդ , կակազեց արբան :

— Հարուստ եմ , տէր երէց , շատ հարուստ , եւ ,  
անկեղծաբար խօսելով , շատ կը սիրեմ ստակս , այն ,  
շատ կը սիրեմ : Անոր կը պարախմ այս պերճանքն որ  
զ'իս կը շրջապատէ , այս պերճանքը որ , չ'եմ ու-  
րանար , — խոսուվանանքս է այս ահա , — բնաւ  
անհաճոյ չ'է ինձի : Խակ բարուրանքս այն է որ ,  
տակաւին շատ երիտասարդ եմ , տարիքիս հետ կա-  
րելի է այս ալ կ'անցնի . . . : Բայց հաւասարի չ'է որ  
սիտի անցնի : Ուրիշ բարուրանք մ'ալ ունիմ . այն  
է որ , եթէ քիչ մը կը սիրեմ ստակս՝ ինձի հայթայ-  
թած հաճոյքներուն համար , շատ մըն ալ կը սի-  
րեմ՝ որ կը ներէ ինձի բարիք ընել շուրջս : Կը սի-  
րեմ զ'այն թերեւս անձնամոլութեամբ , այն ուրա-  
խութեան համար զ'որ կը զգայ մարդ տալով . . . :  
Վերջապէս , կարծեմ թէ հարստութիւնս շատ գէշ  
ձեռքի մէջ չ'է : Ե՞յ լաւ , տէր երէց , ինչպէս դուք  
հոգիներ ունիք հոգալու , ես ալ ստակ ունիմ հոգա-  
լու : Միշտ բսած եմ ես ինձի . և կուզեմ որ ամու-  
սինս , նախ եւ առաջ արժանիք ըլլայ այս մեծ հա-  
րստութեանս մտանակցելու , կ'ուզեմ վստահ ըլլալ

որ զայն աղէկիտ պիտի գործածէ , ինձի հետ , քանի որ ես ողջ ըլլամ , եւ , ինչ ետքն ալ , եթէ ես իրմի առաջ երթամ աշխարհէ : Ա Արթը բան ալ կը-սէի ես ինձի . . . : Կըսէի . և Նա որ իմ ամուսինս պիտի ըլլայ , ես կ'ուզեմ սիրել զնա : և ահա , աէր երէց , հշմարաւապէս հոս կը սկսի խստավանենքս : Մարդ մը կայ , որ երկու ամիսէ ի վեր , ինչ որ կը ցան ըրաւ իր աէրը ինչ ծածկելու համար . . . : Այլ այս մարդը , չեմ տարակուսիր , կը սիրէ զիս . . . : Ժան , այնպէս չ'է , կը սիրէք զիս :

— Այս , բայտ Ժան , ցած ձայնավ , աշքերը զուցած ուրագործի մը ալէս , կը սիրեմ զձեզ :

— Աղէկ զիտէի , բայց վերջապէս ձեր ըերնեն ըսելու պէտք ունէի : Իսկ այժմ , Ժան , կ'երգութիւննեմ ձեզ , ալ բան մը մի արտասանէք : Չեր որ եւ է խօսքը անօգուտ պիտի ըլլայ , պիտի զբութիւն , պիտի արգիրէ զիս մինչեւ ծայրը հասնելու եւ ըսելու ինչ որ կ'ուզեմ անօգանաւ ըսել : Խօսացէք ինձի նուած ուշգերնիդ կենալ , առանց շարժելու , առանց խօսելու . . . : Կը խօսաւանք :

— Կը խօսաւանք :

Պէթինս սակաւ ինչ կը կորսնցունէր իր համար-ձակութիւնը , ձայնը թէ եթեւ մը կը դարձո՞ւնէր : Սա-կայն բոնադրանեալ զուարթութեամբ մը առա նորին .

— Ասուած իմ , աէր երէց , անշուշտ չ'եմ ամ-րաստաներ ձեզ այս եղածին համար , այլ սակայն քիչ մ'ալ ձերն է յանցանքը :

— Իմն է յանցանքը :

— Ահ , զուք ալ մի խօսիք : Այս , կը կրկնեմ ձե-

րըն է յանցանեքը . . . : Ապահով եմ որ Ժամեին իմ զբարան շատ մը ազէկ բաներ բախք, կարի շատ: Թերեւս առանց առոր, չը պիտի մատքերէր . . . : Եւ, միանգամայն, ինձի ոչ, իր վրայ շատ մը ազէկ բաներ կը առէիք, — ոչ կարի շատ իր վրայ, ոչ, ոչ, բայց վերջապէս շատ: — Ուստի, ես, այնքան վրատահաթիւն տնելի ձեր վրայ, որ սկսայ քիչ մաւալի ու շադրութեամբ նկատել ու քինել զինքը: Սկսայ զինքը բազզատել այն ամեն անձանց հետ, որք առրիւ մ'ի վեր զիս ամուսնութեան խնդրած էին: Ինձի թուեցաւ թէ ամեն կերպով անձնոցն ըարձր էր . . . : Վերջապէս եղաւ որ մը . . . կամ լու եւս իրկուն մը . . . երեք շաբաթ կաց, ձեր մեկնելուն նախորդ օրը, ժան, հասկցայ որ ձեզ կը սիրէի . . . Այս, ժան, կը սիրեմ զձեզ . . . : Եկեղաւուցնեմ ձեզ, ժան, մի ըսէք ոչինչ . . . նստած կեցէք . . . մի մօսիք ինձի: Հոս զայէս առաջ, քաջնթեան պաշտր հետո առեր էի: բայց ահա կը տեսնէք, սպան մ'առաջ տնեցած հանդարանութիւնը չը մնաց: Մակայն տակաւին բաներ մը ունիմ ձեզի բակլու . . . Եւ ամենին կարեւորները: Ժան, ըստ մափէք: Չեմ ու զեր այնպիսի պատասխան մը ընդունիլ որ ձեր յուզմոնքին խլած թլամ զայն: Դիսեմ թէ զիս կը սիրէք . . . : Եթէ պիտի ամեն անձնութ ինձի հետ, չեմ ու զեր որ միայն սիրով ըլքայ: Կ'ու զեմ որ զատազութեամբ ալ ըլլայ: Չեր մեկնելուն նախորդաց տասնեւ շինչ օրու ան մը, այնպիսի խնամաք ինէ խոյս առիքը, ամեն խոռոչկցութենէ զգուշացաք, որ չը կրցայ ես զիս ցոյց տալ ինչպէս որ եմ: Թերեւս այնպիսի յատկութիւն-

ներ ունիմ զ'որ դուք չեք զիտեր . . . : Ժան , զիտեմ թէ ինչ էք դուք , զիտեմ թէ ինչ բանի յանձնառու սիտի ըլլամ ձեր կինը ըլլալով , եւ ձեզի համար ոչ թէ միայն զձեզ կաթոգի սիրող կին մը սիտի ըլլամ , այլ նաև կորիճ սրառով կին մը : Ես ձեր ամբողջ կեանքը զիտեմ , ձեր կնքահայրը պատմած է ինձի : Դիտեմ թէ ինչու զինուոր եզած էք , զիտեմ ինչ պարտականութիւններ , ինչ զոհողութիւններ կրնաք նախառեւել ապագային համար . . . : Ժան , մի տարակուսիք , ես չը սիտի կեցնեմ ձեզ այդ պարտականութիւննց , այդ զոհողութիւննց եւ ոչ մէկէն : Եթէ ձեզի գէմ ըսելիք մը ունիմ , թէրեւս այն է միայն որ այն մտածութիւնը ունեցաք , — ո՛հ , անշնչառ ունեցաք այդ մտածութիւնը , — թէ ես սիտի ժամանաքիմ որ ազատ եւ բարուցին ինձի ըլլաք , թէ սիտի խնդրեմ ձենէ որ ձեր ասպարէզը թողաք : Երրէք , երրէք , կը լսէք , երրէք չը սիտի խնդրեմ ձենէ այսօրինակ բան . . . : Իմ ծանօթներէս ազջիկ մը ըրաւ զ'այս՝ երբ ամռանցաւ . գէշ բան էք ըրածը . . . : Ես կը սիրեմ ձեզ այդ պէս ինչպէս որ էք : Որովհետեւ դուք այն անձանցմէ՝ որք զ'իս խրենց կին ածել փափաքեցան , դուք անհոնցմէ տարբեր եւ ըսւագոյն կերպով կ'ապրիք , ահա ասոր համար ես փափաքեցայ ձեզ ինձ ամռանին ունենալ : Եթէ դուք ուլ ահոնց պէս ասպիզ ուզէիք , զ'որս ես չ'ուզեցի . նուազ սիտի սիրէի զձեզ , կամ թէրեւս բնաւ բոկ չը սիտի սիրէի , — եւ ասկայն շատ ոքար սիտի ըլլաք այդ ինձի . . . : Երբ կարենամ ձեզի հետ զալ , սիտի գամ , եւ ուր որ դուք զտնուիք՝ հոն սիտի

ըլլայ իմ պարտականութիւնս , ուր որ դուք ըլլայք հնե պիտի ըլլայ երջանկութիւնս : Եւ , եթէ այն օրը գայ ( \* ) որ զիս չը կարենաք հետ տանիլ , այն օրն ուր պարտիք մինակ երթալ , բայ ուրեմն , Ժան , այն օրը , կը խոստանամ ձեզի քաջ ըլլայ , որ քաջ միաք դուք ալ . . . . Եսկ այժմ , աէր երեց , ոչ իրեն՝ այլ ձեզի կ'ու զզեմ խօսքս . . . կ'ու զեմ որ դուք պատասխանէք . . . Եւ ոչ ինք : Ըսէք . . . Եթէ զիս կը սիրէ Եւ Եթէ զիս իրեն արժանի կը դանայ , իրաւոնիք է որ այսքան խստութեամբ քաւել այս ինձի իմ հարստութիւնս . . . Ըսէք . . . ալ աք չ'է որ ընդունի իմ ամսութիւնն ըլլալ :

— Ժան , բայս . ծանրութեամբ ծերունի քահանան , ամսունացից իրեն հետ . . . պարտառութիւնք է այդ . . . Եւ Երջանկութիւնդ պիտի ըլլայ : Ժան Պէթինացին մասեցաւ , թե երուն մէջ առա , Եւ ձականն զբայ առաջին համբոյրը դրաշմեց : Պէթինա մեղմաքար ետ քաշուեցաւ , Եւ արքային ուղղելով .

— Եւ այժմ , աէր երեց , տակաւին բան մ'ալ ունիս ձենի խեղքելու . . . կ'ու զէի . . . կ'ու զէի . . . :

— Կ'ու զէիք :

— Կ'ազայեմ , աէր երեց , համբուրեցէք զիս : Եերունի քահանան հայրաբար համբուրեց զիս երկու այտերուն զբայ , ու ապա բայս . Պէթինան . . . Յահանի բանձ էք , աէր երեց , որ Ժան ձեր զաւակն է քիչ մը , — Ես ալ , այնուէ չ'է , քիչ մը

(\*) Այն օր՝ այսինքն Ժանին հօր մահուան ու Ֆրանսոյի պարագանեան վրեւը լուծելու օրը :

ձեր աղջիկը պիտի ըլլամ։ Երկու զաւակ ունեցած  
կըլլամք։

Ամսու մը ետքը, Սեպտեմբեր 12, կէս օրին, Պէ-  
թինս, հարսի ամենասպարզ շրջազգ եստով, Լանկ-  
վալի եկեղեցւոյն մէջէն կանցնէր, մինչդեռ խորա-  
նին ետին, Օերորդ դօրազունդին փողը կը հնչէր  
վառվառ ձայներով։ Հնացէն եկեղեցւոյն գ մրէթին  
ներքեւ։

Նաևնի թիւռնէր խնդրեր էր այս հանդիսաւոր  
պարագային մէջ երգեհոնիր նուազելու պատին  
ստանձնել, զի փոքր գանձավինը աներեւոյթ եղեր  
էր։ Շաճանչազեզ պահերով երգեհոն մը գրուած էր  
եկեղեցւոյն վերհաստան մէջ։ Այս երգեհոնը՝ օրի-  
որդ Ռէսսիվալին հարսանեաց ընծան էր՝ ոտ արրա  
ժօնաթանիթէն։

Մերունի Երէցը պատարազն ըստ։ Ժան եւ Պէ-  
թինս ձնրագրեցին առջեւը։ պատկի սրարազու-  
թիւնիր կատարեց եւ ուստ ազօթքի կեցաւ, մէկ  
քանի վայրին անեներ, թեւ ստարած, ի բոլոր սրակ-  
երկնից շնորհը հայցելով իր երկու զաւակացը մրայ։

Այն միջոցին երգեհոնը հնչեցուց Շորէնի այն խո-  
հերքը զոր Պէթինս նուազեր էր առաջին անդա-  
մուն որ մուեր էր այս գեղջկական վոքրինի եկեղեց-  
ւոյն մէջ, որ իր կենաց երջանկոթիւնը պիտի  
սրարազործուի եղեր։

Եւ այս անդամ Պէթինսն էր որ լացաւ։

6n.

